



# ԼԵՅՍ

ԿՐԹՆԵԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԿԱՄԱԹԵՐԹ  
ԳԱՆՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ



**LUYS** — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՄԵՍԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ	Վեր. Մանուէլ Ժինպաշեան
ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ ԱԹԽԱՐՀԸ ԸԱՀԻԼ	Սեպուհ Արք. Սարգիսեան
ՀՈԳԻՆԵՐՈՒ ԿԱՅԱՆՆԵՐԸ ԵՐԿՆՔԻ ՄԷՋ	Խորէն Ա. քհնյ. Ներսէսեան
ԸԱՐԱԿԱՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ	Զարեհ եպս. Ազնաւորեան
ՀԱՅԿԱԿԱՆ ԸԱՐԱԿԵՆՈՑԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	Նորայր Արք. Ծովական
ԽՈՍՐՈՎ Բ. ԹԱԳԱՒՈՐ	Բարզէն Թօփճեան
ՀԱՅՈՑ ԿՂԶԻՆ	Տանիա Օհանեան
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ	Բարզէն Թօփճեան
– The origins of the Armenian Alphabet and Literature	
– Ոգեղէն ճոպանուղի	
– Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ	
– Ճանապարհ	

# ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՉ ՄԵՍԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## Սահմանում

Հին Կտակարանին մէջ Մեսիանականութիւնը ստորոգելիք մըն է Հրէական մտածողութեան մէջ որ կը բազկանայ երկու սկզբնատարրերէ. 1. կը վերաբերի ապագային, անյայտ թուականի մը՝ երբ այս աշխարհը վերջ պիտի գտնէ, եւ «Օրհնեալ Աշխարհ» մը պիտի գայ. 2. որ մօտէն առնչուած է առաջինին հետ, այն համոզումն է որ այդ ապագայի գալիք «Օրհնեալ Աշխարհը» միայն մարդկային ջանքի եւ միջոցառումի հետեւանքը պիտի չըլլայ, հապանակ միջնորդ մը պիտի ունենայ որ «Աստուածատուր զօրութեամբ» օժտուած մէկը պիտի ըլլայ եւ որը Հին Կտակարանին մէջ կը կոչուի «Մեսիա» որ Օծեալ կը նշանակէ: Այդ բառին յունարէնը Քրիստոս է: Դանիէլ 9:25-26 մէջ կը կարգանք.

«Գիտցիր ու հասկցիր, թէ Երուսաղէմը նորէն շինելու հրամանը ելլելէն մինչեւ Օծեալ իշխանին գալը եօթը եօթնեակ ու վաթսուներկու եօթնեակ կայ, մինչեւ նորէն հրապարակն ու պարիսպը շինուին նեղութեան ժամանակներու մէջ: Վաթսուներկու եօթնեակէն ետքը Օծուածը պիտի կտրուի, բայց ոչ իրեն համար...»:

Մեր թուականութենէն առաջ, վերջին երեք դարերու ընթացքին հրէաներ Մեսիա մը կը սպասէին: Այս բանին ակնարկելով է որ Սամարացի կիւր Յիսուսի կ'ըսէ Յովհաննու Աւետ. 4:25 մէջ.

«Գիտեմ թէ Մեսիան, այսինքն Քրիստոսը (Օծեալը) պիտի գայ, երբ անիկայ գայ՝ ամէն ինչ պիտի պատմէ մեզի»:

## ՄԵՍԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՉ

Ա. Ան՝ Դաւիթ Թագաւորի Սերունդէն, Արքայական Մեսիա մը Պիտի Ըլլար

Յաճախ կը յիշուի թէ այն հատուածը որ հիմքը կը կազմէ Հրէական Արքայական Մեսիանականութեան Նախնական մարգարէի խօսքերն են որ մարգարէն Աստուծոյ անունով՝ Դաւիթ Թագաւորին ուղղած է եւ կը գտնուի Բ. Թագ. 7:11-16 համարներուն մէջ: Կ'ուզեմ գայն մէջբերել որոշ յայտարարումներով.

«Տէրը քեզի կ'իմացնէ թէ Տէրը քեզի տուն մը պիտի շինէ: Երբ քու օրերը լեցուին ու դուն քու հայրերուդ հետ քնանաս, քեզմէ ետքը քու երանքէդ ելլող զաւակդ պիտի բարձրացնեմ ու անոր թագաւորութիւնը պիտի հաստա-

տեմ: Անհիկա իմ անուանա տուն պիտի շինէ ու անոր թագաւորութեան ամբողջ յաւիտեան պիտի կանգնեմ: Ես անոր հայր պիտի ըլլամ ու անհիկա ինծի որդի պիտի ըլլայ... Բայց իմ ողորմութիւնս անկէ պիտի չվերնայ... Եւ քու տունդ ու թագաւորութիւնդ իմ առջեւ յաւիտեան ապահով պիտի ըլլայ, քու ամբողջ յաւիտեան հաստատ պիտի մնայ»:

Ըսելու եմ որ այս հատուածը իսկութեան մէջ քաղաքական բնոյթ ունի եւ կը խօսի Դաւիթ թագաւորի «Արքայական տոհմին» մասին, թէ իր զաւակը եւ անոր յետնորդները յաւիտեան պիտի թագաւորեն Իսրայէլի վրայ:

բ. Մեսիայի Կրօնական Բնոյթը

Դաւիթ թագաւորի տրուած այս խոստումէն շուրջ երեք հարիւր տարիներ ետք՝ Եսայի մարգարէն 11րդ գլխուն մէջ Դաւիթի տոհմէն եղող Մեսիային աւելի տարբեր շեշտ մը կուտայ, անոր տալով կրօնական բնոյթ: Եթէ կը փնտռենք մէկնակէտ մը երբ սկսաւ Հրէայ Արքայական Մեսիանականութիւնը, Եսայիի 10 եւ 11րդ գլուխները աւելի հաւանական մէկնակէտ կարելի է նկատել: Անոնք մեզի կուգան ՆՔ 8րդ դարու վերջաւորութենէն: Լաւ կ'ըլլայ որ Եսայիի ըսածը 11.1-9 համարները մէջբերենք՝ դարձեալ յապաւումներով.

«Յեսաէի բունէն շառաւիղ մը պիտի ելլէ եւ անոր արմատէն ընծիւղ մը պիտի բուսնի. Անոր վրայ պիտի հանգչի Տիրոջ հոգին, իմաստութեան ու հանճարի հոգին, խորհուրդի ու զօրութեան հոգին, գիտութեան եւ Աստուծոյ վախին հոգին... Աղքատին դատը արդարութեամբ պիտի տեսնէ եւ երկրի զրկուածներուն համար իրաւամբ պիտի յանդիմանէ: Բերնին գաւազանովը երկիրը պիտի զարնէ եւ շրթունքներուն հոգիովը ամբարիշտը պիտի մեռցնէ... Քայլը գառնուկին հետ պիտի բնակի... Հորթն ու առոյգ առիւծը եւ պարարտ զուարակը միատեղ պիտի արածին, եւ զանոնք պզտիկ տղայ մը պիտի քշէ... Առիւծը արջառի պէս յարգ պիտի ուտէ... Անոնք պիտի չվնասեն եւ չապականեն իմ բոլոր սուրբ լեռանս վրայ. Քանզի երկիրը Տիրոջ գիտութեամբ պիտի լեցուի, ինչպէս ջուրերը ծովը կը ծածկեն»:

Այս հատուածին մէջ Եսայի մարգարէն կը հաստատէ թէ այդ սպասուած ապագայ լաւ ժամանակը, «Օրհնեալ Աշխարհը», պիտի դայ եւ այդ «Օրհնեալ Աշխարհը» կախեալ պիտի ըլլայ Դաւիթի սերունդէն եղող այն անձէն որ մասնաւոր հրապոյր ունի: Ուրեմն հոն կարելի է տեսնել «Մեսիանական Ժամանակի» երկու յատկանիշները. «Օրհնեալ Աշխարհը», եւ միջնորդ եղող «Աստուածատուր Զօրութեամբ օծուած Դաւիթի սերունդէն եղող Մեսիան»:

Շեշտելու եմ որ ըստ Եսայի մարգարէին «Մեսիան» իր ծագումով արքայական եւ Դաւիթի տոհմին պատկանող անձ մը ըլլալու էր:

Այս ապագայ «Մեսիանական Թագաւորի» պաշտօնը պիտի ըլլար «Աղքատներուն դատը արդարութեամբ» տեսնել՝ ինչպէս կ'ըսէ Եսայի մարգարէն: Հոս գործածուած եբրայեցերէնը ունի քանի մը իմաստային մասնիկներ՝ ինչպէս՝ «խոնարհներ, տկարներ, աղքատներ եւ անօգնականներ»: Այսօր այսպիսի մարդիկը կը կոչենք «լուսանցքային» կամ «անտուն» մարդիկ, որոնց շա-

տուլթենէն կը տառապի Մոնթրէյալ քաղաքը:

Այդ գալիք Մեսիան պիտի հաստատէ թագաւորութիւն մը ուր արդարութիւն պիտի տիրէ ամէն տեղ: Սակայն դարձեալ հարց տալու եմ թէ արդեօք այդ թագաւորութիւնը ապագայի յայտնուելիք Մեսիանական թագաւորութիւն է, թէ մարդկային այս աշխարհի վերաբերող թագաւորութիւն մը: Ինծի այնպէս կը թուի որ Եսայի մարգարէն կարծէք աւելի այս երկրաւոր թագաւորութեան մասին կը խօսի քան թէ ապագային գալիք «Օրհնեալ Աշխարհի» մը մասին, ուր «կատարեալ արդարութիւն» պիտի տիրէր:

Եսայի մարգարէի ժամանակէն, մի հարիւր տարի վերջ, ՆՔ 7րդ դարու վերջաւորութեան, կրկին կը հանդիպինք Մեսիանականութեան գաղափարին, որը դարձեալ Դաւիթի Տոհմէն պիտի ըլլար եւ այս աշխարհին պիտի պատկանէր: Այդ կը գտնենք Երեմիա մարգարէի գրքին մէջ ուր ան կը խօսի ապագայի յոյսին մասին իր գրքի 23րդ գլխուն մէջ, կրկին գայն կը մէջբերեմ յապաւումներով.

«Վայ այն հովիւներուն, որոնք իմ հօտիս ոչխարները կը կորսնցնեն ու կը ցրուեն... Դուք իմ ոչխարներս ցրուեցիք ու զանոն վռնուեցիք եւ անոնց հոգ չտարիք... Ես իմ ոչխարներուս մնացորդը պիտի հաւաքեմ այն բոլոր երկիրներէն ուր զանոնք քշեր էի: Զանոնք իրենց փարախները պիտի դարձնեմ, ուր պիտի աճին ու շատնան: Անոնց վրայ հովիւներ պիտի դնեմ, որ զանոնք հովուեն. Անոնք ալ պիտի չվախնան, պիտի չզարհուրին եւ պիտի չպակսին, կ'ըսէ Տէրը:

Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, երբ Դաւիթէն արդարութեան շառաւիղ մը պիտի հանեմ, որ թագաւորէ, իմաստութեամբ պիտի վարուի եւ երկրի վրայ իրաւունք եւ արդարութիւն պիտի ընէ: Անոր օրերուն Յուդան պիտի ազատի եւ Իսրայէլ ապահովութեամբ պիտի բնակի: Այս է անոր անունը, որով պիտի կոչուի. Տէ՛ՐԸ՝ ՄԵ՛Ր ԱՐ՝ԴԱՐՈՒԹԻՒՆԸ (23.1-6):

Այս հատուածին մէջ Երեմիա մարգարէն կը հաստատէ թէ այդ սպասուած ապագայ լաւ ժամանակը՝ «Օրհնեալ Աշխարհը» պիտի գայ եւ այդ «Օրհնեալ Աշխարհը» կախեալ պիտի ըլլայ Դաւիթի սերունդէն եղող շառաւիղէ մը: Հոն դարձեալ կարելի է տեսնել «Մեսիանականութեան ժամանակի» երկու յատկանիշները, «Օրհնեալ Աշխարհը» եւ անոր գալուն միջնորդ եղող «Մեսիան»:

գ. Դաւիթի սերունդէն չեղող Արքայական Մեսիայի մը Գալուստը

Եզեկիէլ մարգարէի օրով, ՆՔ 6րդ դարու առաջին կիսուն, հրեայ ժողովուրդին մօտ ծագեցաւ մի նոր Մեսիանական գաղափարախօսութիւն եւ նոր ու յատուկ ընթերցում մը նախապէս Մեսիանական մարգարէութիւններուն: Դարձեալ այդ Մեսիանականութիւնը «Արքայական» պիտի ըլլար, սակայն ան անպայմանօրէն Դաւիթի սերունդէն պիտի չըլլար: Եզեկիէլ մարգարէ կարծէք կը հաւատար թէ Դաւիթի տոհմին թագաւորութիւնը վերջ գտած էր եւ ապագային Իսրայէլ պիտի կառավարուէր երկու առաջնորդներով. «Իշխանով» մը եւ «Քահանայով» մը: Եզեկիէլ այս իշխանին նախնիքներուն մասին ոչ մի արտայայտութիւն չուսի: Մարգարէն հաւանաբար այդ տեսակէտը կը պարզէ որովհետեւ քաղաքականօրէն Յուդա իր անկախութիւնը կորսնցուցած

էր եւ բոլոր աշխարհի վրայ Բաբելոն կ'իշխէր. կը խորհիմ թէ այս գաղափարական շրջումը կարելի է տեսնել Եգ. 45.9ի մէջ ուր կը տեսնենք անխտիր Իսրայէլի նախկին թագաւորներու դատապարտութիւնը.

«Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ալ հերիք է ձեզի, ով Իսրայէլի իշխաններ: Զրկանքը եւ յափշտակութիւնը վերցուցէք եւ իրաւունք ու արդարութիւն ըրէք: Իմ ժողովուրդէս ձեր բռնի պահանջները վերցուցէք»:

Պատմական Դաւիթի թագաւորութիւնը պարզապէս կը դառնայ Իտէալական թագաւորութիւն մը՝ իր Մեսիա փրկիչով, որ ապագային օր մը պիտի գայ փրկելու իր ժողովուրդը: Ան իսկական Դաւիթը պիտի ըլլայ: Կ'արժէ մէջբերել թէ ինչ կ'ըսէ Եգեկիէլ մարգարէն 34.23-25 համարներուն մէջ:

«Անոնց վրայ հովիւ մը, այսինքն իմ ծառաս Դաւիթը պիտի կեցնեմ, որպէսզի գանոնք հովուէ: Ան պիտի հովուէ գանոնք: Ան պիտի ըլլայ անոնց հովիւը: Ես Տէրս՝ անոնց Աստուած պիտի ըլլամ եւ իմ ծառաս Դաւիթ անոնց վրայ իշխան պիտի ըլլայ: Ես Տէրս՝ խօսեցայ: Անոնց հետ խաղաղութեան ուխտ մը պիտի ընեմ ու այն երկրէն չար գազանները բնաջինջ պիտի ընեմ, որ անապատին մէջ ապահովութեամբ բնակին ու անտառներուն մէջ քնանան»:

Ըստ այս հատուածին իսկական Դաւիթը տակաւին չէ եկած, հապա պիտի գայ եւ ան Իսրայէլի ճշմարիտ հովիւը պիտի ըլլայ: Նախորդ մարգարէները պատմական Դաւիթը կը նկատէին որպէս նախահայրը Մեսիանական Թագաւորին, իսկ այժմ Դաւիթ դարձած է անոր տեսլականը կամ մտատիպարը:

Դարձեալ Եգեկ. 37.24-27 համարներուն մէջ կը կարդանք.

«Անոնց վրայ իմ ծառաս Դաւիթը թագաւոր պիտի ըլլայ ու ամէնքը մէկ հովիւ պիտի ունենան: Իմ հրամաններուս համաձայն պիտի քալեն, իմ օրէնքներս պիտի պահեն ու գանոնք պիտի կատարեն: Պիտի բնակին այն երկրին մէջ որը իմ Յակոբ ծառայիս տուի, որուն մէջ ձեր հայրերը բնակեցան ու հոն իրենք ու իրենց որդիները եւ իրենց որդիներուն որդիները յաւիտեան պիտի բնակին ու իմ ծառաս Դաւիթը յաւիտեան անոնց իշխան պիտի ըլլայ: Անոնց հետ խաղաղութեան ուխտ պիտի ընեմ, որը անոնց յաւիտեանական ուխտ պիտի ըլլայ: Զանոնք պիտի տեղաւորեմ ու շատցնեմ եւ իմ սրբարանս անոնց մէջ պիտի դնեմ յաւիտեան: Իմ խորանս անոնց քով պիտի ըլլայ: Ես անոնց Աստուած պիտի ըլլամ եւ անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան»:

Ինչպէս կը տեսնէք, հոս ալ ակնարկութիւն չկայ Դաւիթի տոհմէն եղող Մեսիայի մասին, որով Դաւիթ դարձած է մտատիպար մը:

Եգեկիէլ մարգարէն կը սպասէր նոր Դաւիթի մը, որ իրենց յոյսերը իրականացնէր: Ինչպէս վերը տեսանք, այդ Մեսիանական յոյսը հաստատուած էր Դաւիթի սերունդէն եղող շառաւիղի մը վրայ: Սակայն ժամանակի ընթացքին մեսիանական յոյսը սկսաւ փոխուիլ եւ Դաւիթի Ազգատոհմէն անցնելով, «Իտէալական Դաւիթի» տեսլականը զգեցաւ, որը իր սերունդէն ըլլալու անհրաժեշտութիւնը չուէր: Այս ընթացքով՝ յետագայ մեսիանական մտատիպարները տարբեր երեւոյթ մը պիտի ստանային:

դ. Դաւիթի Տան Կործանումը, Մեսիանականութեան խաւարումը եւ Երկու Օծեալ Առաջնորդներու Պատկերին Յառաջանալը - Մին Աշխարհական եւ Միւսը Կրօնական

ՆՔ 6րդ դարու քսանական թուականներուն իսրայելացիք այն տպաւորութեան տակն էին որպէս թէ Մեսիանական յոյսերը իրականանալու ճամբուն վրայ էին: ՆՔ 521ին մեծ խումբ մը աքսորեալներ Բաբելոնէ վերադարձան Երուսաղէմ իրենց գլուխը ունենալով երկու առաջնորդներ. Աշխարհական առաջնորդ մը, Չորաբաբել իշխանը, եւ կրօնական առաջնորդ մը՝ Յեսու քահանան: Այս պարագային, դարձեալ իշխանը՝ Չորաբաբել, Դաւիթի տոհմէն էր: Չաքարիա մարգարէն որ այն ժամանակ կ'ապրէր, կ'ըսէ (4.12-14).

«Երկրորդ անգամ հարցուցի. «Երկու ոսկի խողովակներուն միջոցով իւրը իրենցմէ ոսկիի պէս թափող երկու ձիթենիի ոստերը ի՞նչ են»: Ինծի պատասխանեց եւ ըսաւ. «Անոնց ինչ ըլլալը չե՞ս գիտեր»: Ես ըսի. «Ոչ, ով տէր իմ»: Ըսաւ. «Անոնք երկու օծեալներն են, որոնք բոլոր երկրի Տիրոջը առջեւ կը կայնին»:

Ըստ մարգարէին՝ առանց յստակացնելու թէ որոնք են անոնք՝ այդ երկու ձիթենիի ոստերը, յստակօրէն օծուած երկու մարդիկ էին՝ Չորաբաբել իշխանը եւ Յեսու քահանան, եւ այդ կերպով երկուքն ալ մտած էին «արքայական Մեսիանականութեան» ծիրէն ներս: Սակայն ընդունելու ենք որ երկու գլխանի երկիր կառավարելը անհնարին է: Սկզբնական շրջանին Չորաբաբելն էր գերիշխան՝ ինչպէս կը տեսնենք Չաքարիա մարգարէի 3.8 համարին մէջ.

«Հիմա մտիկ բրէք, ով Յեսու մեծ քահանայ, դուն եւ քու առջեւը նստող բարեկամներդ, քանզի անոնք իբր նշան տրուած մարդիկ են: Վասն զի ահա ես իմ ծառայ Ծարաւիդը պիտի բերեմ»:

Հոս, ըստ մարգարէին, Աստուած իր «ծառան» որ գալիք «օրհնեալ աշխարհը» պիտի բերէր՝ Ծարաւիդ կը կոչէ: Հոս գործածուած բառը ապագային գալիք մեծ թագաւորն է եւ Ծարաւիդ այն տիրողոսն է որ Երեմիա մարգարէն ալ գործածած է մատնանշելու թէ Ծարաւիդը արգարութիւն պիտի հաստատէ Իսրայէլի մէջ: Մարգարէին յոյսը եւ հոն գտնուող շատ մը մարդոց յոյսը կեդրոնացած էր Չորաբաբելի վրայ որպէս մեսիան:

Անգէ մարգարէն որ ժամանակակից էր Չաքարիա մարգարէին, կ'իմացնէ թէ Նաբուգոդոնոսոր թագաւորի կործանած տաճարին վերականգնումի գործը իսկապէս սկսաւ Չորաբաբելի եւ Յեսու քահանայի միջոցով, սակայն ամէն յիշատակութիւններու մէջ՝ միշտ Չորաբաբելը առաջին տեղը կը գրաւէր:

Չաքարիա մարգարէի Յրդ գլուխը մեզի կը ներկայացնէ, զոչուծի տեսարան մը. «ապաշխարող» Յեսու քահանային պատկերը: Յեսու միայն զոչուծի քայլէն վերջ է որ հաստատուեցաւ որպէս քահանայապետ.

«Յեսու աղտոտ հանդերձներ հագեր էր եւ հրեշտակին առջեւ կը կայնէր: Հրեշտակը իր առջեւ կայնողներուն խօսեցաւ եւ ըսաւ. «Աղտոտ հանդերձները ատոր վրայէն հանեցէք»: Անոր ալ ըսաւ. «Նայէ, քու անօրէնութիւնդ վրայէդ վերցուցի եւ քեզ պատուական զգեստներ պիտի հագցնեմ» (3.3-5):

Այնպէս կ'երեւի որ վէճ մը տեղի ունեցած է Զորաբարել իշխանին եւ Յեսու քահանային միջեւ եւ հարցը դասաւորուած է ի նպաստ իշխանին, քանի Յեսու թերացած կը նկատուի եւ ապաշխարութեան կարօտ:

Ե. Մեսիանական Քահանայապետի Իտէալը

Սակայն նոր տաճարին նաւակատիքին ատեն, ՆՔ 515 թուին, միայն Յեսու քահանայապետ կը գտնենք որպէս գլխաւոր դերակատար: Զորաբարել իշխանը անյայտացած է եւ իր որդիներէն ոչ մէկը չի յիշուիր որ զինք փոխարինած ըլլայ տաճարի նաւակատիքին: Այս բանին մէջ ոչ միայն Զորաբարել անյայտացած է, հապա ամբողջ պաշտօնակարգութիւն մը իր հետ վերացած էր: Զաքարիա մարգարէի ճրգ գլուխը որ սկիզբը կը խօսէր երկու թագերու մասին՝ պատրաստուած ժողովուրդին կողմէ, դրուելու համար Զորաբարելի եւ Յեսուի գլխուն վրայ, փոփոխութեան ենթարկուած է եւ դրուելու է մէկ հոգիի գլխուն վրայ, այսինքն՝ միայն Յեսուի (6.9-13):

«Դարձեալ Տիրոջ խօսքը ինծի եղաւ ըսելով. «Գերութենէն դարձողներէն, Հեզգայէն, Տուբիայէն եւ Յեղայիայէն առ ու նոյն օրը գնա Բաբելոնէն եկող Սոփոնիայի որդիին Յովսիայի տունը մտիր: Արծաթ եւ ոսկի առ եւ պսակներ շինէ ու մեծ քահանային Յովսեփեկեան Յեսուի գլխուն դիր, եւ ըսէ անոր. «Զօրքերու Տէրը կը խօսի ու այսպէս կ'ըսէ. Ահա այն մարդը, որուն անունը Շարաւիդ է. Ան իր տեղին մէջ պիտի բուսնի եւ Տիրոջ տաճարը պիտի շինէ: Ան պիտի շինէ Տիրոջ տաճարը եւ պատիւ պիտի ունենայ եւ իր աթոռին վրայ նստելով պիտի կառավարէ եւ քահանայ պիտի ըլլայ իր աթոռին վրայ եւ երկուքին մէջտեղ խաղաղութեան խորհուրդ պիտի ըլլայ»:

Այս գրուածը միայն կարելի է նկարագրել որպէս քաղաքական մեծ յեղափոխութիւն մը, ուր իշխանական ընտանիք մը կ'անյայտանայ եւ անոր տեղ կը ծագի «Մեսիանական քահանայական» պատրանքը: Այս մեծ պատրանքէն Իսրայէլի հաւաքական գիտակցութեան մէջ մնաց մէկ բան, որ մեծ կենսունակութիւն տուաւ բոլոր ազգին: Մեսիանական տեսութիւնը կորսնցուց մէկ փրկիչի մը գաղափարը եւ զգեցաւ երկգլուխեան երեւոյթ մը եւ մանաւանդ Մեսիայի մտապատկերը անջատուած էր թագաւորի կերպարէն եւ ալ կարելի էր ունենալ «Քահանայ Մեսիա» մը: Մեսիանական գործառնութիւնը որ ազգը փրկել էր, գատուելով թագաւորի մտապատկերէն, զգեցած էր նոր կրօնաւորի սքեմ: Այս բանը նաեւ կարելի է տեսնել Զաքարիա մարգարէին մէկ ուրիշ հատուածին մէջ (9.9-10), որը մէջբերուած է Մատթէոսի Աւետարանին 21.5 եւ Յովհաննու Աւետարանին 12.15 համարներուն մէջ Յիսուսի Յաղթական մուտքի առիթով.

«Մեծապէս ուրախացիր, ով Սիօնի աղջիկ, ցնծութեամբ աղաղակէ, ով Երուսաղէմի աղջիկ. Ահա քու թագաւորդ քեզի կուգայ. Ան արդար ու փրկիչ է, հեզ է ու իշու վրայ հեծած եւ իշու ձագի, աւանակի վրայ: Ու Եփրեմէն կառքը եւ Երուսաղէմէն ձին պիտի ջնջեմ: Պատերազմի աղեղը պիտի կտորեմ: Անիկա ազգերուն խաղաղութիւն պիտի քարոզէ, անոր իշխանութիւնը ծովէ

ծով, գետն է մինչև երկրի ծայրը պիտի ըլլայ»:

Յրդ համարին մէջ նկարագրուած այս տկար եւ յաղթական թագաւորի պատկերը լաւ կը յարմարի Զորաբարելի իշխանութեան սկզբնական շրջանին: Սակայն անգամ մը որ ան պատմութեան թատերաբեմէն անյայտացաւ, անհրաժեշտ էր նոր մեկնաբանութիւն մը գտնել այդ խօսքերուն եւ տալ անոր կրօնական մեկնաբանութիւն մը, որ կարելի է տեսնել 10րդ համարին մէջ: Երբ պատերազմական կառքը կը վերնայ եւ զինուորական զէնքերը կ'ոչնչանան, կը մնայ կրօնաւորի սքեմը միայն եւ ան «խաղաղութիւն կը քարոզէ»:

գ. Գերմարդկային Պարգեւներով Օժտուած էակներ

Երուսաղէմի մէջ տիրող Մեսիանական քաղաքական մտածելակերպին հակառակ, Պարսկական շրջանին, հրէական մտածողութեան մէջ սկսաւ երեւան գալ տիպարներ, որոնք գերմարդկային պարգեւներ ունէին: Անոնք Մեսիաններ չէին բառին բովանդակ առումով՝ հապա կը կատարէին Մեսիայի հետ առնչուած որոշ պարտականութիւններ: Այս «գերմարդկային էակները» կ'օգնէին երկրիս վրայ իրագործելու աստուածային ծրագիրները եւ մարդոց փրկութեան գործին կ'օժանդակէին:

Մաղաքիա մարգարէն, որ ՀԿի վերջին գիրքն է, իր մարգարէութեան վերջին երկու համարներուն մէջ կը գրէ (4.5-6).

«Ահա ես Եղիա մարգարէն ձեզի պիտի զրկեմ դեռ Տիրոջ մեծ եւ ասեղօրը չեկած: Անիկա հայրերուն սիրտը՝ որդիներուն եւ որդիներուն սիրտը հայրերուն պիտի դարձնէ, որ չըլլայ թէ ես գամ եւ երկիրը անէծքով զարնեմ»:

Եղիա մարգարէի գալը շատ անգամներ յիշուած է Նոր կտակարանին մէջ (տեսնել Մատթ. 11.14, 17.10-12, Մար 9.10-12, Ղուկ 1.17): Մաղաքիա մէկզի դրած է Մեսիանականութեան գաղափարը եւ անոր տեղ կը յիշէ Եղիա մարգարէի գալուստը:

1. Առաջին գերմարդկային պարգեւներով օժտուած էակն էր Եղիան: Իր մասին կը կարդանք Գ. Թագ 2.11-ի մէջ.

«Երբ անոնք (այսինքն՝ Եղիան եւ Եղիսէն) խօսելով կ'երթային, աս հրեղէն կառք մը եւ հրեղէն ձիեր երեւցան ու զանոնք իրարմէ զատեցին ու Եղիա մըրիկով երկինք ելաւ»:

Անոր մարմինը չգտնուեցաւ, քանի որ ան երկինք տարուեցաւ իր մարմնով: Եղիայի մասին կը կարդանք ոչ միայն ՀԿի մէջ, այլ նաեւ ՆԿի մէջ: Ինչպէս տեսաք, ան չի մեռաւ, հապա երկինք առնուեցաւ եւ կ'ապրի երկինքը: Օր մը պիտի դառնայ երկնքէն եւ պիտի բուժէ Իսրայէլի ներքին անհամաձայնութիւնները, որպէսզի Աստուած իր բարկութեամբ Հրէաստանը չկործանէ: Ինք չէ որ ապագայ թագաւորութիւնը պիտի հաստատէ, հապա պիտի գործակից դառնայ, որ Իսրայէլ փրկուի, հոգ չէ թէ ան ոչ թագաւոր էր, ոչ ալ քահանայ: Հաւանաբար, ան այդ երկու պաշտօնները ունեցող մարդոցմէ աւելի բարձր շնորհքներ ունէր:

2. Երկրորդ անձնաւորութիւնը, որ գերմարդկային յատկանիշներ ունէր՝ Ենովքն էր: Ծնն. 5.24ի մէջ կը կարդանք. «Ենովք Աստուծոյ հետ քալից եւ չէր գտնուէր, քանզի Աստուած առաւ զանիկա»: Ենովքի մասին լայն գրականութիւն կայ, որ այսօր ոչ մէկ եկեղեցական Սուրբ Գրքի կանոնին մէջ մտած չէ, բացի Ղպտի Եկեղեցիի Սուրբ Գրական կանոնին մէջ:

3. Երրորդ գերմարդկային պարգեւներ ունեցող էակը Մելքիսեդեկ Սաղէմի թագաւորն է, որ «բարձրեալ Աստուծոյ քահանան» կոչուած է: Ան Աբրահամ օրհնեց, ինչպէս կը կարդանք Ծննդոց 14.18-20ի մէջ: Սակայն իր մասին աւելի լայն տեղեկութիւն կուտայ մեզի Պօղոս առաքեալ իր Եբրայեցոց նամակին 7.1-3ի մէջ.

«Մելքիսեդեկ Սաղէմի թագաւորն էր, Բարձրեալ Աստուծոյ քահանան՝ որ Աբրահամը դիմաւորեց՝ երբ ան թագաւորներուն կոտորածէն կը դառնար եւ օրհնեց զանիկա: Աբրահամ ալ անոր տասանորդ տուաւ իր ստացուածքէն... Առանց հօր, առանց մօր, ազգատուած չունեցող, որուն ոչ օրերուն սկիզբը կայ, ոչ ալ կեանքին վախճանը, եւ Աստուծոյ Որդիին նման ըլլալով, կը կենայ ու կը մնայ միշտ քահանայ»:

4. Եթէ պարականոն գրականութեան երթալու ըլլանք, հոն կայ չորրորդ գերմարդկային պարգեւներ ունեցող էակ մը, որու նկարագրութիւնը Առակներու Գրքին մէջ տրուած է եւ որը մեզի հասած է Եթովպական Ենովքի երկրորդ հատորին 37-71 գլուխներուն մէջ: Այս 4րդ գերմարդկային պարգեւներ ունեցող էակը «Մարդու Որդին» է: Իր մասին առաջին անգամ կը կարդանք Դանիէլի մարգարէութեան 7.13-14 համարներուն մէջ.

«Գիշերը տեսիլքի մէջ կը տեսնէի, եւ ահա երկնքի ամպերով Մարդու Որդիի նման մէկը եկաւ, եւ հասաւ Հինաւուրցին (այսինքն՝ Ան որ յաւիտեան կենդանի է) եւ գինք (այսինքն՝ Մարդու Որդին) անոր ներկայացուցին: Անոր իշխանութիւն, պատիւ եւ թագաւորութիւն տրուեցաւ, որպէսզի բոլոր ժողովուրդները, ազգերն ու լեզուները անոր ծառային: Անոր իշխանութիւնը յաւիտեանական իշխանութիւն է, որ պիտի չանցնի եւ թագաւորութիւնը պիտի չկործանի»:

Դանիէլի 7.13ի մէջ գործածուած խօսքը՝ «Նման մարդու որդիի մը», արամայերէն է: Արամայերէն այս խօսքը բոլոր ՀՅի մէջ միայն հոս, Դանիէլի մէջ գործածուած է: Սակայն այս նոյն խօսքին եբրայեցերէն ձեւը «Մարդու որդին» ՀՅի մէջ գործածուած է 108 անգամ: Դանիէլի 8.17ին մէջ այդ անունով Գաբրիէլ հրեշտակը կը կանչէ Դանիէլը: Այդ երկու խօսքերն ալ թէ արամայերէն , թէ եբրայեցերէն ընդհանրական իմաստ ունին եւ կ'ակնարկեն մարդոց: ՆՅի մէջ ալ Յիսուս ինքզինք նոյն անունով կոչած է:

«Մարդու որդի» կոչումը ժամանակի ընթացքին ստացաւ մասնաւոր Մեսիանական իմաստ, ինչ որ կարելի է տեսնել յաջորդ համարի մէջ, ուր ան կը ներկայացուի Հինաւուրցին, այսինքն՝ Աստուծոյ, որ յաւիտեան կենդանի է

(7.14).

«Անոր իշխանութիւն, պատիւ եւ թագաւորութիւն տրուեցաւ, որպէսզի բոլոր ժողովուրդները, ազգերն ու լեզուները անոր ծառայեն: Անոր իշխանութիւնը յաւիտեանական իշխանութիւն է, որ պիտի չանցնի եւ թագաւորութիւնը պիտի չկործանի»:

Այլ խօսքով՝ «Մարդու Որդին» յաւիտեան պիտի թագաւորէ, ան Մեսիան է: «Մարդու Որդիի» այս գաղափարը շատ ընդարձակ է: Ուրիշ առիթով կարելի է անդրադառնալ անոր:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ինչպէս տեսանք՝ Մեսիայի առաջին պատկերացումը Հին Կտակարանին մէջ անոր Դաւիթ թագաւորի սերունդէն ըլլալն էր, որը Արքայական Մեսիայի մը պատկերն էր:

Այս պատկերը կամաց-կամաց փոխուելով՝ դարձաւ Դաւիթ թագաւորի սերունդէն չեղող Արքայական Մեսիայի մը գաղափարին: Սակայն վրայ հասան թագաւորութեան կործանումը, Երուսաղէմի եւ տաճարին ակերումը, եւ աքսորը դէպի Բաբելոն Ն.ք 586 թուականին:

Ասոր հետեւանքը Մեսիանականութեան խաւարումը եղաւ: Սակայն կրօնական ջերմեռանդութիւնը չի կրնար առանց Մեսիայի մնալ եւ անոր համար է, որ կը տեսնենք Գերմարդկային Պարգեւներով Օժտուած էակներ, որոնք Մեսիայի դերը պիտի կատարէին:

ՎԵՐ. ՄԱՆՈՒԷԼ ՃԻՆՊԱՇԵԱՆ



# ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ ԱՇԽԱՐՀԸ ՇԱՀԻԼ

«Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք  
պիտի ժառանգեն երկիրը» (Մատթ. Ե.5):

Գալիլիոյ ծովափին նայող կանաչորակ ու բարձրաբերձ լեռան կողին բազմած, քաղցրախօս Վարդապետը՝ երկնային ցօղի նման իր խօսքերը կը հեղուր զինք ունկնդրող հասարակութեան վրայ: Ժողովուրդը, ծալապատիկ նստած, քար լուծեամբ մտիկ կ'ընէր զինք: Խօսքերը երկնաբոյր, հատիկ-հատիկ արտահնչուած, կը հասնէին ականջներուն եւ սրտերուն անոնց, որոնք այդ պահը իրենց համար վերածած էին երանութեան իսկական վայրկեաններու, ըմբռնելով ամբողջական ներկայութիւնը Աստուածորդու:

«Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը» խօսքին արձագանգը կը ճամբորդէ սիրտէ սիրտ ու միտքէ միտք, կը ճեղքէ ամբոխը ու կը խառնուի ծովակի ալիքներուն: Տէրոջը ձայնն է այդ, որ մարդ արարածը կը հրաւիրէ ինքնաճանաչման, զգաստութեան եւ իրական գիտութեան, որպէսզի կարենայ իր կեանքը վերածել քաղցրաճաշակ պտուղի, ի հաստատութիւն եւ ի պայծառութիւն Աստուծոյ թագաւորութեան: Սաղմոսերգուն ալ կը գրէ. «Հեզե՛րը պիտի ժառանգեն երկիրը», այսինքն տէր պիտի ըլլան իրական կեանքին, որ այս աշխարհէն կը սկսի (Սաղմ. Լէ.11): Հեզե՛րն են որ Աստուծոյ հաճութեան եւ խոստացուած փրկութեան պիտի արժանանան, որովհետեւ «Տէրը խոնարհները փրկութեամբ պիտի փառաւորէ» (Սաղմ. ձեթ. 4): Հեզե՛րն են որ իր շնորհները առատօրէն պիտի վայելեն, եւ իրենց կեանքով բալասան պիտի ըլլան իրենց շրջապատին մէջ: Այսպէս՝ Մովսէս, որ «շատ հեզ» էր, Աստուծոյ կամակատար ծառայ ըլլալու պատիւին արժանացաւ (Թուոց ԺԲ. 3):

Վստահաբար Յիսուս իր Հօր կամքն էր որ կ'արտայայտէր, երբ երանի՛ կու տար հեզերուն, խոնարհներուն, որպէս ժառանգորդները այս երկրի ու յաւիտենական կեանքի: Քրիստոսի սա՛ յորդորը՝ «Առէ՛ք իմ լուծս ձեր վրայ եւ սորվեցէք ինձմէ, որովհետեւ ես հեզ եմ ու սրտով խոնարհ», եղաւ կեանքի մէկնակէտն ու նպատակը իր առաքեալներուն եւ յետագայ դարերու հետեւորդներուն, որոնք օրինակելի տիպարներ հանդիսացան հեզութեան, ու խոնարհութեան (Մատթ. ԺԱ. 29): Այս առաքիներութիւնները կ'ենթադրեն հոգեկան կորով եւ ոյժ, գիտակցական վիճակ ու վաւերական մեծութիւն: Պօղոս Առաքեալ կ'ուզէ որ քրիստոնեան միա՛յն իր հեզութեամբ նշանաւոր ըլլայ այս աշխարհի մէջ. «Ուրա՛խ եղէք Տէրոջմով ամէն ատեն. դարձեալ կ'ըսեմ, ուրա՛խ եղէք: Ձեր հեզութիւնը թող յայտնի ըլլայ բոլոր մարդոց» (Փիլիպ. Դ. 4-5): Կողոսացիներուն գրած իր Թուղթին մէջ Առաքեալը կեանքը իմաստաւորող յորդորներ կ'ուղղէ եկեղեցւոյ անդամներուն. «Ուրեմն իբրեւ սրբագործուած ու սիրուած ընտրեալներ Աստուծոյ՝ հագէք զԹալիր գորովը, քաղցրաբարոյութիւնը, խոնարհամտութիւնը, հեզութիւնը, երկայնամտութիւնը,

հանդուրժող ոգի ցոյց տալով մէկզմէկու հանդէպ եւ ներելով իրարու՝ երբ մէկը միւսին դէմ տրտնջալու պատճառ մ'ունենայ» (Կող. Գ. 12-13):

Աւետարանական հասկացողութեամբ՝ հեզութեան առաքինութեամբ զարդարուած քրիստոնեան կ'ապրի ամբողջական գիտակցութիւնը իր հոգեղէն արարած եւ Աստուծոյ ձեռակերտ ըլլալու իրողութեան, եւ ըստ այնմ կը տնօրինէ իր կեանքը: Շնորհալի Հայրապետը կ'ըսէ. «Խոնարհութիւնը ծնունդն է հեզութեան, իսկ ամբարտաւանութիւնը՝ բարկութեան. որովհետեւ բարկութիւնը թշնամութիւն եւ անարգանք կը պատճառէ, մինչ հո'ն ուր խոնարհութիւն կայ, անարգարութեան տրտմութիւն չկայ»:

Հայերէն լեզուին մէջ՝ հեզ կը նշանակէ քաղցր, խոնարհ, մեղմ ու հանդարտ բնաւորութեան տէր: Դժբախտաբար շատ յաճախ սխալ կը մեկնաբանուին այս խօսքերը, ու նման անձ մը կը նկատուի որպէս տկար եւ անգիտակ. նոյնիսկ հեզանքի եւ արհամարհանքի ենթակայ կ'ըլլայ: Հասկացողութեանց ի՞նչ հակասութիւն: Աւետարանական ճշմարտութիւններուն համեմատ ապրող մարդը վստահաբար գիտակից է իր ինքնութեան, եւ ոչ մէկ ձեռով կ'ազդուի իր շրջապատի թիւր ըմբռնումներէն: Հեզութիւնը հեռու կը վանէ ամբարտաւանութիւնը, որ արմատն է բոլոր մոլութիւններուն: Աստուած խստիւ կը դատապարտէ մեծամիտները, որովհետեւ հպարտութեան ենթակայ անհատը կը հեռանայ իր Ստեղծիչէն: Տէրը կ'ըսէ. Ձեր զօրութեան հպարտութիւնը պիտի խորտակեմ, ու ձեր երկինքը երկաթի պէս եւ ձեր երկիրը պղինձի պէս պիտի ընեմ» (Ղեւտ. ԻԶ. 19):

«Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը» խօսքը ոսկեայ բանալին է իրական ու վաւերական կեանքին, որովհետեւ ան կ'առաջնորդէ քրիստոնեան՝

Ա. ԻՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ: Դարերո՛վ կրկնուած ու մարդոց կենցաղով հաստատուած իրականութիւն է, որ ինքզինք ճանչնալը կը կազմէ մեծագոյն առաքինութիւնը: Յոյն փիլիսոփային «Ծանի՛ր զքեզ» խրատը ոչ միայն կեանքը իմաստաւորող ճշմարտութիւն է, այլեւ մարդը իր կոչումին եւ առաքելութեան մէջ պահող ազդակ: Ա՛ն որ ինքզինք չի ճանչնար, չի կրնար ուրիշ բանի ծանօթանալ, մանաւանդ Աստուծոյ: Ինքնաճանաչումով մարդ էակը տէր կը դառնայ իր զգացումներուն, լայնախոհութեամբ կը դիտէ շրջապատը եւ ըստ այնմ կ'ապրի. կը հեռանայ մեծամտութեան, հպարտութեան, փառասիրութեան եւ ինքնագովութեան ախտազին զգացումներէն ու կ'առաջնորդուի իրական աստուածապաշտութեան: Փարիսեցիին ու մաքաւաւորին առակը գեղեցկագոյն օրինակն է ինքնաճանաչման: Առաջինը՝ մոռցած իր անձը եւ նոյնիսկ իր Ստեղծիչը, աւելի ճիշդը՝ թաղուած մեծամտութեան մոլութեան մէջ, ինքնագովութեամբ կը փորձէ ինքզինք արդարացնել. մինչ մաքաւաւորը, գիտակից իր մարդկային տկարութեան ու մեղաւոր վիճակին, աչքերը գետին յառած՝ սրտին խորերէն կ'ազդբւէ Աստուծոյ, որ ներէ իր մեղքերը: Ինքնաճանաչումով մարդ արարածը ինքզինք աւելի մօտ կը զգայ Ե՛ւ

իր ընկերոջ, եւ Արարչին:

Ինքնաճանաչումով՝ մարդ կը գիտակցի ոչ միայն հողեղէն արարած ըլլալու իրողութեան, այլեւ կը զգայ իր անձին տկարութիւնը եւ ըստ այնմ կը փորձէ շարունակ լեցուիլ աստուածային ճշմարտութեամբ, որպէսզի կարենայ տէր ըլլալ ինքնիրեն ու իր զգացումներուն: Արդարեւ ոեւէ մէկը չի կրնար ուրիշին ուղղութիւն տալ, եթէ ի՛նք առաջնորդը չէ իր անձին: Այս իմաստով է որ Առակաց գիրքը կ'ըսէ. «Ինքզինք կառավարողը – իր հոգին գսպողը – քաղաք մը գրաւողէն աւելի լաւ է» (Առակ. ԺԶ. 32):

Հեղութեամբ ու խոնարհութեամբ զսպանակուած ինքնաճանաչումը մարդը կը դնէ իր ուղիղ ընթացքին մէջ. մինչ փառամոլութեան, հպարտութեան ու մեծութեան զգացումներով շարժող անձը, ի՛նչ պաշտօնի, դիրքի եւ կամ հանգամանքի տէր ալ ըլլայ, չի կրնար արդիւնաւորել իր կեանքն ու գործը: Ժամանակաւոր ու երեւութական պարագաները չեն դիմանար կեանքի փորձաքարին: Պօղոս Առաքեալ Թեսաղոնիկեցիներուն գրած իր առաջին Թուղթին մէջ կ'ըսէ. «Մարդոցմէ փառք չփնտեցինք, ոչ ձեզմէ՝ ոչ ալ ուրիշներէ: Իբրեւ Քրիստոսի առաքեալներ՝ կրնայինք ծանրութիւն ըլլալ ձեզի: Բայց ձեզի հետ մեր ունեցած յարաբերութեան մէջ մենք եղանք հեզ, դայեակի մը նման՝ որ իր մանուկները կը խնամէ» (Ա. Թես. Բ. 6-7): Նո՛յն կեանքի ապրելաձեւը կը թելադրէ նաեւ իր սիրելի աշակերտին՝ Տիմոթէոսի. «Դո՛ւն, ո՛վ մարդ Աստուծոյ, փախի՛ր այդ բաներէն: Հետամուտ եղի՛ր արդարութեան, աստուածպաշտութեան, հաւատքի, սիրոյ, համբերութեան ու հեղութեան» (Ա. Տիմ. Զ. 11):

Բ. ՃՇՄԱՐԻՏ ԳԻՏՈՒԹԵԱՆ: Հեղութեամբ ու խոնարհութեամբ ապրուած կեանքը միջոց է եւ ուղեցոյց՝ ճշմարիտ գիտութեան, իրական աստուածպաշտութեան: Ինքզինք խորապէս ճանչցող անձը անկասկած կ'անդրադառնայ, որ իր գիտցածը ովկիանոսէն լոկ կաթիլ մըն է. հետեւաբար միշտ հետամուտ կ'ըլլայ առաւել գիտութեան, որով եւ յարատեւ վերանորոգութեան ու լիցքաւորման: Հեզ մարդը կը զգայ անհրաժեշտութիւնը իր կեանքը յարատեւ աշակերտութեան վերածելու. կ'ապրի տկարութիւնն ու մեղաւորութիւնը իր անձին եւ միշտ ջանադիր կ'ըլլայ աւելիին, մեղքերու ներման եւ Աստուծով զօրանալու: Խոնարհութիւնը գինք կ'առաջնորդէ իրական մեծութեան: Առակաց գիրքը կ'ըսէ. «Փառքին առջեւէն խոնարհութիւնը կ'երթայ» (Առակ. ԺԵ. 33): Աստուած խոնարհ ու հեզ հոգիներուն մէջ կը բնակի եւ զանոնք Իրմով կը զօրացնէ. «Ես բարձր ու սուրբ տեղը կը բնակիմ, բայց կոտրած ու խոնարհ հոգի ունեցողին հետ եմ, որպէսզի խոնարհներուն հոգին կենդանացնեմ եւ կոտրած սրտերը ապրեցնեմ» (Եսայ. Մէ. 15): Քրիստոսի յաւերժաբոյր Խօսքը կնիքն է Հին Կտակարանի վկայութիւններուն. Ո՛վ որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ո՛վ որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ» (Ղուկ. ԺԸ. 14):

«Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիր»: Այո՛, երանի՛ հեզերուն, այսինքն՝ իրական ու վաւերական քրիստոնեայ մարդոց,

որովհետեւ իրե՛նք միայն գիտեն արժէքը իսկական կեանքին, որ Աստուծոյ ներկայութեան մէջ կը փթթի ու յաւիտեան կը գոյատեւէ: Վերջապէս երանի՛ այն մարդոց, որոնք ականջալուր են աստուածային պատգամին, որուն արձագանգը մօտաւորապէս երկու հազար տարիներէ ի վեր կը լսուի Գալիլիոյ ծովակի ալիքներուն ընդմէջէն:

Խոնարհութեան, հեզութեան երանական վիճակը բոլոր ժամանակներու մարդոց սրտագին փափաքն ու իղձը եղած է վստահաբար: Քրիստոսի Աւետարանին աշակերտները եւ յետագայ դարերու եկեղեցւոյ հաւատացեալները միշտ հետամուտ կ'ըլլան անոր: Պատմութիւնը արձանագրած է անունները «հերոս»ներուն, որոնց հեզ ու խոնարհ կեանքը իսկական բալասան հանգիսացած է իրենց շրջապատին: Այսօր, գիտութեան նուաճումներով եւ նիւթական հարստութիւններով յղփացած մարդկային ընկերութիւնը՝ որեւէ ժամանակէ աւելի կը կարօտի քրիստոնէական հասկացողութեամբ, հեզութեամբ ու խոնարհութեամբ իրենց կեանքը արժեւորող «հերոս»ներու. պէտք ունի աւետարանական սկզբունքներով պատուաստուելու, որպէսզի կարենայ ճշմարիտ թարգմանը դառնալ աստուածային կեանքին այս աշխարհի վրայ:

Կը հնչէ ձայնը Աստուածորդիին. «Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը»: Մեր հաւատաւոր ու հաւատացեալ հայրերուն նման՝ ունկնդիր ըլլանք այս յորդորին, եւ հեզութեան ու խոնարհութեան ուղիէն քալենք, որպէսզի արժանանանք աստուածային օրհնութեան եւ երանութեան վիճակին:

ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ



## Հոգիներու Կայանները Երկնքի Մէջ

Մարդու մը մահէն ետքը անոր հոգին ո՞ր կ'երթայ: Ս. Գրական արձանագրութեանց համաձայն՝ վախճանեալներու հոգիները կը համախմբուին երկնքը, կայան կամ օթեւան կոչուած վայրերու մէջ, ուր կը սպասէին վերջին դատաստանի օրուան:

Բայց արդար հոգիներու կայանը զատ է եւ մեղաւոր հոգիներունը՝ զատ: Արդարները գիտեն որ վերջին դատաստանի օրը, պիտի արժանան բարի վարձքի ու ժառանգեն Երկնից Արքայութիւնը. հետեւաբար ուրախ ու երջանիկ են: Նմանապէս մեղաւոր հոգիներ, գիտնալով իրենց վիճակուած յաւիտենական տանջանքի գալիք դատապարտութիւնը, ինքնաբերաբար ափսոսանքի խորը ցաւով կը տանջուին ու կը տառապին:

Մեծատան եւ աղքատ Ղազարոսի օրինակը (Ղուկ. ԺԶ. 19-31), յստակ կերպով կը փաստէ երկու կայաններու գոյութիւնը: Աւետարանի սոյն հատուածին մէջ «Աբրահամին Գիրիզ», ուր կը գտնուի Ղազարոսը, արդարներու կայանն է, իսկ մեծատան գտնուած տեղը՝ մեղաւորաց կայանը: Յիսուս ըսաւ. «Հօրս տան մէջ օթեւաններ շատ կան» (Յովհ. ԺԴ. 2): Ոսկեբերան կ'ըսէ. «Յայտնի է որ ասկէ մեկնելէն ետքը, հոգիները երկնքի մէջ տեղ մը կը համախմբուին եւ իշխանութիւն չունին կամ կարող չեն ետ հոս դառնալու, այլ՝ կը մնան հոն ու կը սպասեն վերջին դատաստանի ահեղ օրուան» (Մեկն. Մատթ.ի, էջ 442): Շարականներու մէջ հոգիներու կայաններուն մասին կան որոշ ակնարկութիւններ, օրինակ՝ «Կամաւ մատուցին զանձինս իւրեանց քեզ պատարագ արեամբն իւրեանց եւ ակն ունին պսակի ի քէն Տէր»:

Ուրեմն, արեամբ մկրտուած ու հաւատքով ննջած արդարներու հոգիները, արդարներու կայանին մէջ կը սպասեն յաւիտենական երանութեան պսակն ընդունելու, Քրիստոսի երկրորդ գալուստին:

Նման բազում ակնարկութիւններ կան սրբազան շարականներուն մէջ: Ծնորհալի Հայապետը իր 2A համարնոց «Հաւատով Խոստովանիմ» նշանաւոր աղօթքին մէջ կ'ըսէ. «Լոյս ձշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման ատուրն ու հանգչիլ յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քո»:

Արդ, ի՞նչ է իմաստը Երկնից Արքայութիւն, Դրախտ եւ Դժոխք բառերուն:

Երկնից Արքայութիւնը, յաւիտենական երանութեան վայրն է, ուր կը գտնուին Աստուծոյ հրեշտակները, սերովբէներն ու քերովբէները, ուր եւ պիտի մտնին արդարներու հոգիները, Քրիստոսի երկրորդ գալուստէն ու վերջին Դատաստանէն յետոյ:

Դրախտ ըսուածը՝ Ազամի անմեղութեան վիճակին մէջ, երկրիս վրայ ունեցած բնակութեան սուրբ տեղին անունն է, որ փոխաբերաբար կը գործածուին նաեւ «Արդար հոգիներու կայան»ի իմաստով:

Իսկ Դժոխքը՝ մեղաւորաց կայանն է, ուր գտնուող հոգիները, անշէջ հուրի մէջ ինկածի պէս կ'այրին ու կը տառապին, իրենց մեղքերուն պատճառաւ:

Լուսաբանութեան համար առնինք նաեւ Քրիստոսի աջակողմեան աւագակին գրուցած խօսքը, թէ՛ «Այսօր ինծի հետ Դրախտին մէջ պիտի ըլլաս» (Ղուկ. ԻԳ. 43): Նկատելի է որ Յիսուս աւագակին «Այսօր ինծի հետ Արքայութեան մէջ պիտի ըլլաս» չըսաւ, այլ՝ Դրախտին: Որովհետեւ Քրիստոս այդ օրը Արքայութիւն չմտաւ, ո՛չ ինք առանձին եւ ո՛չ ալ աւագակին հետը:

Այս իրողութիւնը, Մխիթար Աբբան կ'արձանագրէ հետեւեալ կերպով. «Նոյն օրը Քրիստոսի հոգին մարմէն բաժնուելով, անբաժանելի Աստուածութեամբը, Դժոխք իջաւ ազատելու համար սուրբերու հոգիները, եւ Քրիստոսի հոգիին հետ էր նաեւ աւագակին հոգին»:

Հասկնալի է որ թէ՛ սրբոց հոգիները, որ ազատեցան եւ թէ՛ աւագակի հոգին, միասնաբար հո՛ն էին, ուր որ էր Քրիստոսի հոգին: «Եւ Քրիստոսի հոգին՝ աւանդելէն մինչեւ յարութիւնը, երեք օր, Լիմպոսի մէջ էր» (տես Մեկն. Մատթ.ի, էջ 883-884): Բողոքականեան աստուածաբանութիւնը Լիմպոսի տեղ կը գործածէ՝ Հատէս բառը, որ նոյն իմաստն ունի:

Արդ, Քրիստոսի հոգին երեք օրուան ընթացքին, ըստ Հռոմէականին՝ Լիմպոսն էր, ըստ Բողոքականին՝ Հատէսն էր, իսկ ըստ Ս. Գրոց՝ Ոգւոց Բանտն էր: «Տես Ա. Պետ. Գ. 19 եւ Նասյ. ԽԲ. 7»:

Հետեւաբար, Դրախտը արդար հոգիներու կայանը կամ օթեւանն է, իսկ Երկնից Արքայութիւնը՝ յաւիտենական երանաւայրն է, ուր՝ արդարները պիտի մտնեն վերջին դատաստանէն յետոյ:

Այս է Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ ըմբռնումն ու դաւանանքը, որ Ս. Գրական վաւերական տուեալներու համաձայն աւանդուած ու հաստատուած է Լուսաւորիչ, Շնորհալի եւ այլ Ս. հայրերու կողմէ:

ԽՈՐԷՆ Ա. ՔՀՆՅ. ՆԵՐՍԵՍԵԱՆ



## Մանկունք

Այսօր բերկրանքով Հայաստանեայց Եկեղեցին  
հանդիսաւորապէս կը տօնէ յիշատակը նոր վկաներուն,  
որոնք իրենք անձերը իբրեւ զոհ ընծայեցին  
առաքինական նահատակութեամբ՝  
(իրենց) հաւատքին եւ հայրենիքին համար.  
անոնց աղօթքով, Տէ՛ր, պահէ՛ մեզ:

Այսօր սոսկումով եւ հիացումով աշխարհը տեսաւ  
Ն՝որ Յորդանան մը, արիւնով կազմուած,  
եւ անոր վերեւ՝ երկինքը պատուած,  
ուրիշ Հօր ձայնը (դարձեալ) կը վկայէր.  
«Ատոնք որդիներս են իմ ընտրած».  
անոնց աղօթքով, Տէ՛ր, օրհնէ՛ մեզ:

Այսօր հրեշտակները փութացին ընդունելու  
մեծ բազմութիւնը սուրբ նահատակներուն.  
որովհետեւ լսեցին ձայնը Տիրոջ (որ կ'ըսէր).  
«Եկէ՛ք, իմ Հօրս կողմէ օրհնեալներ,  
Ժառանգեցէ՛ք արքայութիւնն ձեզի համար պատրաստուած».  
անոնց աղօթքով, Տէ՛ր, խմբէ՛ մեզ:

Այսօր նշխարեալ մեր Հայաստան աշխարհը կը խայտա՛յ  
Ապրիլեան այս նահատակներու տօնախմբութեան առիթով,  
որովհետեւ իր բոլոր մասնիկներուն մէջ ցանուած նշխարներն ասոնց՝  
նոր կեանքի մը դարունին  
յոյսին կատարման աւետի՛սը կու տան.  
ասոնց աղօթքով, Տէ՛ր, վերատի՛ն կանգնէ՛ զայն:

Եկէ՛ք, գաւակներդ նահատակներուն,  
զանոնք նկատենք պարծա՛նքը մեր հայրենիքին.  
պի՛նդ փարիսք այն աւանդութեանց  
որոնց համար անոնք իրենց կեանքը տուին.  
եւ մանաւանդ առաջնորդուինք այն պայքարին օրինակով  
եւ կտակո՛վը որ անոնք մեզի տուին՝  
իբրեւ զբաւական մեր ազգին կենդանութեան.  
անոնց աղօթքով, Տէ՛ր, փրկէ՛ մեզ:

ԶԱՐԵՀ ԵՊՍ. Ա.ԶՆԱԻՈՐԵԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԱԿՆՈՑԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեզի հասած ձեռագիր շարակնոցները հեռու են միօրինակ բնագիր մը ներկայացնելէ: Զանազան ժամանակներու մէջ եւ այլեւայլ տեղեր օրինակուած այդ ձեռագիրներուն քննութիւնը մեզ կ'առաջնորդէ զանազանելու չորս տարբեր խմբագրութիւններ: Իրարմէ մեծ եւ կարեւոր տարբերութիւններ ներկայացնող այդ չորս խմբագրութիւնները կրնանք անուանել սապէս.

- Ա. - Բարսեղեան,
- Բ. - Խլիկեան (Խլիցի),
- Գ. - Ունիթորական,
- Դ. - Զայնաշար (Զայնքաղ):

Վերոգրեալ խմբագրութեանց ծանօթանալու համար պիտի առնենք զանոնք մի առ մի:

Ա. - Բարսեղեան խմբագրութիւն. - Այսպէս անուանեցինք մեզի ծանօթ հնագոյն այս խմբագրութիւնը, այն ենթադրութեամբ թէ Ներսէս Շնորհալիի ժամանակակից Դրագարկցի Բարսեղ եպիսկոպոսն է զայն կազմողը: Այս խմբագրութենէն մեզի ծանօթ է մէկ ձեռագիր միայն, որ կը գտնուի Ս. Յակոբեանց Մատենադարանին մէջ եւ կը կրէ 1654 թիւը: Այս ձեռագրին պարունակութեան մանրամասն նկարագրութիւնը կարելի է տեսնել Ս. Յ. Զեռագրաց Յուլիանի Ե. Հատորին մէջ, էջ 485-488:

Այս խմբագրութեան մէջ առաջին Կանոնը կը վերաբերի Աստուածայայտութեան ճրագալոյցին եւ կը սկսի «Ուրախացիր Սրբուհի» Օրհնութեամբ, որուն հեղինակը կը համարուի Մովսէս Քերթոզ:

Նկատելի կէտ մըն է սա, որ այս խմբագրութեան Ապաշխարութեան Կանոնին մէջ դրուած են նախ վեց ԱԶ Հարցեր, ապա վեց Ողորմեաններ եւ յետոյ նոյնքան Տէր յերկնիցներ: Խլիկի խմբագրութիւնը կը փոխէ այդ կարգաւորութիւնը եւ Հարցին ետեւէն կը դնէ Ողորմեան եւ ապա Տէր յերկնիցը, ինչպէս ունի տպագիր Շարակնոցը: Ասկէ զատ պէտք է նշել նաեւ սա պարագան, որ Խլիկեան խմբագրութիւնը ԱԶ Հարցերէն յետոյ դրած է նոյն ձայնի Մանկունքը եւ երկու պատկեր համբարձիները: Այս նորաձեւ կարգաւորութիւնը կիրարկուած է յաջորդ ձայներուն համար ալ(1):

Բ. - Խլիկեան, կամ Խլիցի խմբագրութիւն, զոր կազմած է Գրիգոր վարժապետ, մականուն ինու- գործակցութեամբ Սկեւռացի Գէորգ Վարդապետի (+ 1301): Այս խմբագրութենէն ծանօթ է մեզի ընտիր օրինակ մը, որ կը կրէ Ս. Յակոբեանց Մատենադարանին 1578 թիւը, որուն նկարագրութիւնը կարելի է տեսնել Ս. Յ. Զեռ. Յուլիանի Ե. Հատորին մէջ, էջ 359-362:

Գրիգոր Խուլի խմբագրած Շարակնոցին սկիզբը դրուած է «Կանոն

Ծննդեան Սրբոյ Աստուածածնին ի ծնողաց իւրոց ի Յովակիմայ եւ յԱննայէ», որուն Օրհնութիւնը կը սկսի «Երգեցէք որդիք Սիրոնի երգ նոր» բառերով: Այս Կանոնին հեղինակը կը համարուի Յակոբ Կթղ. Կլայեցի (1268-1286):

Այս խմբագրութիւնը ունի զանազան տարբերակներ, ինչպէս Ձեռ. Ս. Յ. թիւ 1335, 1556, 1575 եւ 1692 (կրճատեալ օրինակութեամբ):

Խլկցի Շարակնոցները համարուած են ընտիր օրինակ եւ տարածուած ամէն կողմ: Ձեռագրաց Մատենադարաններու մէջ կը պահուին հարիւրաւոր օրինակներ սոյն խմբագրութեանէն, իրարմէ փոքր տարբերութիւններով, յառաջ եկած՝ ետքէն յաւելուածաբար օրինակուած աւելի կամ նուազ թիւով շարականներու առկայութեամբ:

Ալիշանի տեսած Շարականի Խլկցի հնագոյն օրինակը կը կրէ եղէր ԶԾԸ (1309) թուականը (Սիսուան, էջ 106, ծնթ. 1): Աւելի հին օրինակի մը - 1269 թուականէն - յիշատակութիւնը կայ Տաշեան Յուցակին մէջ (Տես էջ 447ա): Երուսաղէմի Ձեռագրատան պատկանող հնագոյն օրինակը կը կրէ 1279 թուականը, որ կը գտնուի 1692 թիւին ներքեւ, եւ կը ներկայացնէ յոյժ կրճատեալ բնագիր մը: Երկրորդ կու գայ թիւ 1575 ձեռագիրը, որ օրինակուած է ԶԾԴ (1305) թուին:

Խլիկեան խմբագրութիւնը հետագային արժանացաւ հիմը դառնալու սուղագրեալ Շարակնոցին, փոքր փոփոխութիւններով եւ յաւելումներով:

Գ. - Ունիթորական - ԺԳ. դարու վերջերը եւ ԺԴ. դարու սկիզբները Գր. Անաւարդեցին եւ այլ ունիթորներ գրեցին բազմաթիւ անարուեստ շարականներ եւ ներմուծեցին Խլիկեան խմբագրութեան մէջ: Այս խմբագրութեամբ Շարակնոցներ գործածուած են լատինամէտ հայերու կողմէ միայն, եւ այդ պատճառով ընդհանուր տարածում չեն ունեցած: Այդպիսի անվաւեր խմբագրութիւններէն մեզի ծանօթ են հետեւեալները:

1. - Ձեռ. Ս. Յ. թիւ 503, օրինակուած Սմբատ թագաւորի համար, 1297 թուին. - Տես Յուցակ Ձեռ. Ս. Յակոբեանց, Բ. Հատոր, էջ 497-502:

2. - Օշին թագաւորի Ժամագիրք - Շարակնոցը, օրինակուած 1319ին. - Տես Նկարագիր Օշին թագաւորի Ժամագիրքին, Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեան, Անթիլիաս, 1933, էջ 51-80:

3. - Ձեռ. Ս. Յ. թիւ 1361. սա կը բացուի Գր. Անաւարդեցիի շարադրած մէկ շարականով, որ կը կրէ «Կանովն Յղութեան Սրբուհւոյ Աստուածածնին ի ծնողաց իւրոց Յովակիմայ եւ Աննայէ» խորագիրը, եւ կը սկսի «Կարողաբար զաւրութեամբ» բառերով:

Հոս կ'արժէ յիշել որ յատկապէս Գր. Անաւարդեցիի գրած շարականները պարունակող հին ձեռագիր մըն ալ կը գտնուի Ս. Յ. Մատենադարանին մէջ, 3187 թուահամարին տակ, եւ կը բովանդակէ շուրջ 30 Կանոններ:

Դ. - Չայնաշար. այսպէս կը կոչենք, նկատելով որ ութ ձայներու պատկանող բոլոր շարականները, ԱԶ - ԴԿ, խմբուած են յաջորդաբար. կը սկսին

«Երգեսցուք երգ նոր», ԱԶ Աւագ Օրհնութեամբ: Ս. Յ. Զեռագրատան մէջ այս խմբագրութեանէն մեզի ծանօթ են եօթ օրինակներ թիւ 1535, 1567, 1671, 1689, 1708, 2474, 2478 - որոնմէ առաջինին միայն՝ թուականն ու տեղը յայտնի են - 1657, Հալէպ:

Չայներու համաձայն դասաւորուած Շարակնոցներու երկու տարբեր տիպերու եւս հանդիպեցանք մեր ձեռագիրներուն մէջ: Մին, թիւ 2467, կը սկսի ԱԶ, «Յանճառ փառաց խոնարհեցար» շարականով, իսկ միւսը, թիւ 2468, «Յաղթական քեզ օրհնութիւնք» ԴԿ. Աւագ Օրհնութեամբ:

Նկատողութեան արժանի է սա պարագան ալ, որ կարգ մը ընտիր շարականներ երբեմն իբրեւ կանոնական կիրարկուած են բայց հետագային դուրս մնացած տպագիր Շարակնոցներէն: Իսկ տարբեր անարժէք թխածոյ շարականներ ալ - Գրիգոր Անաւարդեցիի կամ իր նման լատինամոլներու կողմէ գրուած - որոնք տեղ գտած էին ունիթորական Շարակնոցներու մէջ, հետագային եղծուած կամ պատռուած են իբրեւ անվաւեր գրուածքներ:

ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ  
«Վանատուր»

Ծանօթ. (1) Նոյն խմբագրութեան պատկանող Շարակնոցներ կը համարուին Երեսնի թիւ 9838 ձեռագիրը, օրինակուած Երուսաղէմ 1193 թուին, եւ Վեներիկի թիւ 97 ձեռագիրը, գաղափարուած ԺԳ. Դարուն:



# Խոսրով Բ. քագաւոր (Կոտակ)

(ծն. անյայտ - շ. 338)

Պարսկական արքունիքի դրդումով երբ հայ պարսկասէր նախարարներ կը յաջողին թրուսաւորելով սպաննել Հայաստանի Արշակունեան Հարստութեան Տրդատ Գ. Մեծը (250-330), անոր Խոսրով Բ. որդին հռոմէացիներու հովանաւորութեամբ կը յաջորդէ հօրը: Ան ծանօթ է Կոտակ անունով՝ կարճահասակ ըլլալուն համար:

Խոսրով Բ-ի գահակալութեան ժամանակ, հայոց կաթողիկոսն էր Ս. Գրիգոր Լուսաւորիչի երէց որդին՝ Վրթանէս Ա. Պարթեւ Հայրապետը (333-341), որ մեծ դեր խաղաց եւ զօրեղ ազդեցութիւն ունեցաւ հայ արքունիքի պետական գործունէութեան վրայ: Երկար տարիներ ծառայելով Տրդատ Գ-ի պալատին մէջ, ան փորձառութիւն ձեռք ձգեց քաղաքական ու դիւանագիտական գործունէութեանց մէջ եւ արդիւնաւէտ կերպով սատար հանդիսացաւ Կոտակի տիրակալութեան: Յակոբ Մանանդեան արդարօրէն դիտել կու տայ, որ՝ «Տրդատ Գ-ի եւ նրա յաջորդների ժամանակ Քրիստոնէական եկեղեցին եւ նրա յաջորդները մեծ դեր էին խաղում ո՛չ միայն երկրի կրօնական, այլեւ քաղաքական կեանքում» (Երկեր Բ., էջ 142):

Խոսրով Բ-ի թագաւորութեան սկզբնական տարիները խաղաղ չըջան մը եղած են Հայաստանի համար: Համաձայն Փաւստոս Բիւզանդի՝ «Երկիրն ալ խաղաղութիւն եւ շինութիւն, մարդաշատութիւն եւ առողջութիւն, պտղաբերութիւն եւ ստացուածաշատութիւն եւ շահեկանութիւն կը վայելէր» (Հյոս. պտմ., էջ 87). սակայն, 337ին, երբ վերջ կը գտնէ Բիւզանդիոնի եւ Պարսկաստանի միջեւ ստորագրուած քառասնամեայ խաղաղութեան պայմանագիրը, Շապուհ Բ. (310-379) որդեգրելով Սասանեան արքաներու քաղաքականութիւնը, պարսկասէր հայ նախարարներու գործակցութեամբ կը ջանայ վերստին իր ազդեցութեան տակ առնել հայոց աշխարհը, հակակշռելու համար հռոմէական կայսրութեան գերիշխանութիւնը:

Հայաստանի վայելած խաղաղութիւնը կ'ընդհատուի, երբ Մանաւագեան եւ Որդունիք հարեւան նախարարութիւններ վիճելի կալուածներու համար կը պատերազմին զիրար կոտորելով: Երկրին ներքին խաղաղութիւնը հաստատելու եւ արիւնայեղութիւնը դադրեցնելու նպատակաւ, Վրթանէս կաթողիկոս Աղբիանոս եպիսկոպոսը կը ղրկէ զանոնք հաշտեցնելու. վերջինը երբ կը ձախողի իր առաքելութեան մէջ, այս անգամ, երկրին կարգն ու կանոնը պահպանելու համար, Խոսրով Կոտակի հրամանով Վահէ Մամիկոնեան կը յարձակի անոնց վրայ ու պատերազմէն յաղթական դուրս գալով կը բնաջնջէ նախարարական այդ հին տոհմերը:

Հայաստան կ'ապրի օրհասական պահեր. Շապուհ Բ-ի դրդումով մագրութեաներու Սանեսան թագաւորը իր շուրջ հաւաքելով հիւսիսային վաչկատուն ցեղախումբերը, յանկարծակի կը յարձակի ու կը գրաւէ Մեծ Հայքը:

Սանեսանի արշաւանքի ընթացքին, ինսորով թագաւորը եւ Վրթանէս կաթողիկոս կ'ապաստանին Կողովիտ գաւառի Դարոյնք բերդը: Վաչէ Մամիկոնեան հռոմէացիներու մօտ կ'ուղարկուի օգնութիւն խնդրելու: Ան գլուխ հանելով իր առաքելութիւնը եւ հռոմէական զօրքին աջակցութեամբ հայրենիքը կ'ազատէ հիւսիսականներու ձեռքէն, սրածելով անոնց բանակը ու սպաննելով ըմբոստ Սանեսան թագաւորը 336 թուին:

Շապուհ Բ. հետապնդելով իր ծրագիրը չեզոքացնելու համար հայ արքունիքին, կաթողիկոսութեան, Մամիկոնեաններու եւ հռոմէական կայսրութեան կողմնակից նախարարներու խմբակցութեան զօրակցութիւնը, կրկին իր դրդումով, Բզնունեաց Դատաբէն նահապետը, որ հայոց բանակին հրամանատարն էր պարսիկներու արշաւանքի ժամանակ, նենգութեամբ անոնց կը միանայ, տապալելու համար ինսորովի իշխանութիւնը: Վաչէ սպարապետ Վահան Ամատունի նախարարին գործակցութեամբ նոր բանակ կազմելով կը ճակատին պարսիկներու դէմ ու յաղթական դուրս կուգան Առեստի պատերազմէն ջարդելով ու հալածելով թշնամի զօրքերը: Անոնք կը յաջողին գերի բռնել Դատաբէնը. ինսորովի հրամանով դաւաճանը կը սպանեն քարկոծելով (Տե՛ս Բիւզանդ, էջ 19):

Նոյն ատեն, Աղծնիքի Բակուր բղեշխը պարսկական բանակին օժանդակութեամբ կ'ապստամբի ինսորովի դէմ: Վերջնոյն հրամանով արքունի կողմնակի իշխանները իրենց զօրքերով կը պատերազմին ու կը յաղթեն պարսիկներուն կոտորելով անոնց զօրբանակը: Զերբակալուած դաւաճան բղեշխը իր եղբայրներուն եւ որդիներուն հետ կը սպանուին արքունի հրամանով (Տե՛ս Բիւզանդ, էջ 21):

Ինսորով թագաւոր կեդրոնախոյս նախարարներու ապստամբութիւններուն առաջքը առնելու նպատակով յատուկ օրէնք կը սահմանէ, որով եթէ անոնց զօրքերը հազարէ աւելի են, անոնք պալատին կից բնակելու են իր հսկողութեան ներքեւ, նաեւ, անոնց արգիլուեցաւ արքունի բանակին մղած պատերազմներուն մասնակցել (Տե՛ս Բիւզանդ, էջ 20):

«Ինսորով Բ-ի այս կարգադրութիւնը», կ'ըսէ Մանանդեան, «անշուշտ, մի ապացոյց է նրա թագաւորական իշխանութեան թուլութեան եւ նախարարութիւնների կեդրոնախոյս ու խռովարար տրամադրութիւնների» (անդ., էջ 154):

338ին, պարսկական զօրքերը աւելի ուժեղութեամբ նոր յարձակում կը գործեն Հայաստանի վրայ, որ չարաբախտ կ'ըլլայ հայ հասարակութեան:

«Այնուհետեւ», կը պատմէ Փաւստոս Բիւզանդ, «նորից դաժան կերպով պատերազմ սկսուեց միմեանց դէմ պարսիկների ու հայերի միջեւ, որովհետեւ պարսիկները հաւաքուեցին ու մեծ բազմութեամբ եկան, որ գրաւեն Հայաստան աշխարհի երկրները: Ապա Մեծ Հայքի սպարապետ եւ զօրավար Վաչէն ժողովեց նախարարական զօրքերի ազատներից կազմուած բանակը եւ եկաւ պատերազմ տալու պարսից զօրքերին: Երկու կողմից էլ սոսկալի կոտորած եղաւ եւ մեծամեծ աւագանիներից շատերը կոտորուեցին ու ոչնչացան: Այս պատերազմում սպանուեց նաեւ Վաչէն, Հայոց Մեծ սպարապետը, եւ ամբողջ

երկիրն անասելի սգի մէջ ընկաւ, որովհետեւ նրա ձեռքով էր շատ անգամ Աստուած փրկել հայերին» (անդ., էջ 26):

Հայ իշխաններու եւ զօրականներու, մանաւանդ Վաչէ Մամիկոնեանի մահը սուգի կը մատնէ հայ ժողովուրդը. «Անմխիթար էին թագաւորն ու զօրքը», կը բնութագրէ Փրոֆ. Լէոն, «ահա այդ ընդհանուր թուլացման միջոցին ուժեղ քաջալերիչ խօսքով հանդէս է գալիս Վրթանէսը: Պատերազմը նա յայտարարում է սրբազան եւ նրա մէջ ընկած բոլոր մարտիկներին՝ նահատակներ, որոնց յիշատակը պիտի կատարէր եկեղեցին տարեցտարի: Ինքնավստահութիւն եւ քաջութիւն ներշնչելու համար կաթողիկոսը այդպիսի կարգադրութիւն առաւ եւ սպագայի համար, տնօրինելով, որ պատարագի ժամանակ յիշուեն եւ նրանք, որոնք պատերազմներուն կը սպանուեն այնուհետեւ» (Երկեր, Ա. հտր., էջ 435):

Արդարեւ, «ազգային նահատակներուն տօնին հիմնադիրն ու սկզբնաւորողն եղած է Վրթանէս Հայրապետ», կարեւորութեամբ կը նշէ Օրմանեան Սրբազան, ան բացատրած է, թէ անոնք որ այդ պատերազմին մէջ ինկան, յաղագս աշխարհի եւ Եկեղեցւոյ եւ աստուածագործ օրինացն մեռած էին, որպէս զի եկեղեցիք եւ սրբութիւնք անհաւատներուն ձեռքը չիյնան, եւ սուրբ հաւատքը չանարգուի, թէ անոնք բարեպաշտութեան նահատակ եղան, եւ ընդ վկայա Քրիստոսի է նոցա համար պատուոյ, ուստի պէտք է որ դիցուք ընդ աշխարհս օրէնս յաւիտեանս յաւիտենից, որպէս զի իբրեւ Քրիստոսի նահատակաց անոնց յիշատակը տօնուի: Նաեւ հրամայեց որ այսուհետեւ որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, անոնց հետ յիշատակուին անխափան: Այդ տեսութեամբ, իւր ճիշդ բացատրութիւնը կ'ընդունի Ազգային Տօն կամ Ազգային յիշատակ անունը» (Ազգ. Ա. հտր., էջ 132-133):

Այս օրերուն երբ կը հռովուի Ապրիլեան եղեռնի նահատակներու սրբադասումի հարցը, նկատի առնուելու է Վրթանէս Հայրապետին յիշալ ուղեղեծը:

330 պատերազմէն ետք, Դուինի արքունիքին մէջ կը վախճանի Խոսրով Բ. Արշակունի թագաւորը. անոր մարմինը կը թաղեն Դարանաղ գաւառի Անի ամրոցի Արշակունիներու տոհմական գերեզմանոցին մէջ:

Հակառակ Խորենացիի պատումին, որ Խոսրով Բ. «ոչ մի քաջութեան գործ ցոյց չտուեց հօր նման... մարմինով փոքր էր եւ անփոյթ լինելով քաջութեամբ եւ բարի յիշատակների՝ զբաղած էր զբօսանքներով, թռչնորսութեամբ եւ այլ որսերով» (Հյց. պտմ., էջ 248), սակայն ան իմաստութիւնը ունեցաւ ընդգրկելու եւ գործադրելու Արտաշէս Մեծի այն գաղափարը թէ երկիրը կառավարելու համար անհրաժեշտ է կարգ ու կանոն գոյացնել անդորրութեամբ իշխելու համար: Իսկ արտաքին ճակատի վրայ բարեկամութիւն մշակեց հոմէացիներուն հետ, ինչպէս նաեւ լեզու գտաւ ու հաշտուեցաւ Շապուհ Բ-ի հետ որոշ հարկ վճարելով:

Խոսրովի երկրորդ գործը եղաւ Արտաշատ մայրաքաղաքի փոխադրումը Դուին<sup>(1)</sup>, ուր նաեւ հաստատուեցաւ Կաթողիկոսական Աթոռը: Արտաշատը երկու կողմով շրջապատուած էր Արաքս գետով, որ տարիներու ընթացքին փո-

խեց իր հունը, հեռացաւ պարիսպներէն թուլացնելով բերդին դիմադրականութիւնը: Արտաշատի բնակիչներն ալ սիրալոծար փոխադրուեցան Դուին, քանի որ գոյացած ճահիճներէն ապականած էր օդը: Ան նոր մայրաքաղաքը հիմնադրեց Արտաշատի հիւսիսը գտնուող եւ ռազմական արժէք ներկայացնող բլուրին վրայ, որը պարսկերէն լեզուով Դուին կը նշանակէ:

Խոսրովի անախընթաց երրորդ իրագործումը եղաւ Արարատեան դաշտի մէջ անտառատնկութիւնը: Համաձայն Բիւզանդի, արհեստական անտառներ տնկելու պետական պարտադիր աշխատանքին մասնակցեցաւ ժողովուրդը: Շուրջ 29000 տարածութեան վրայ, սկսելով Գառնի բերդի մօտէն, Ազատ գետի ձորով մինչեւ Դուինի Տիկնունի ապարանքը եւ այնտեղէն տարածուելով մինչեւ Արտաշատ եւ Արաքս: Անտառին առաջին մասը կոչուեցաւ «Տաճար Մայրի», իսկ երկրորդը՝ «Խոսրովակերտ» (Դ. Ը.):

«Խոսրովի անտառը գոյատեւեց երկար, ապշեցնելու չափ երկար՝ շուրջ 16 դար», կը վկայէ գիտնական Գրիգոր Գուրզաղեան, եւ այդ ընթացքում ինչէ՛ր միայն չանցան հայ աշխարհի գլխով՝ արշաւանքներ արաբների, մոնկոլների, թաթարների...պատերազմներ, կոտորածներ՝ անթիւ, անհամար...Եւ ի՛նչ զրկանքներ, ի՛նչ դաժանութիւններ չապրեց հայ աշխարհը, ժողովուրդը, բայց Խոսրովի անտառին ոչինչ չպատահեց, նա անցաւ բոլոր արհաւիրքների միջով. այդ անտառի վերջը եկաւ մեր ժամանակներում՝ մի քանի տարի առաջ. հիմա Խոսրովի անտառում չկայ ոչ մի ծառ»:

Ուսումնասիրելով Խոսրով Բ. Կոտակի ութամեայ իշխանութիւնը, հակառակ իր տկարութիւններուն, ան մեզի կը ներկայանայ որպէս շինարար ու հայրենասէր անձնաւորութիւն մը, որ կարելին ըրաւ ապահովելու Հայաստանի անգործութիւնը, բարօրութիւնն ու բարգաւաճումը:

ԲԱՌԳԷՆ ԹՕՓՃՆԱՆ

Ծանօթ.

1). – Դուին քաղաքի պատմութեան մասին կ'արժէ կարդալ դոկտ. փրոֆ. Կարօ Ղաֆազարեանի երկատոր «Դուին քաղաքը եւ նրա պեղումները» մեծարժէք պատմա-հնագիտական աշխատասիրութիւնը, որ ըստ Ա. Ղանալանեանի «Մեծ նշանակութիւն ունի ոչ միայն Հայաստանի, այլեւ Անդրկովկասի ու Մերձաւոր Արեւելի միջնադարեան քաղաքներու պատմութեան, տնտեսական կեանքի, կենցաղի եւ մշակութի ուսումնասիրութեան համար» (Հայկ. Սով. Հանր., էջ հոր., էջ 38):

# Հայոց Կղզին

«Զգուշութեամբ կոխեցէք Միսիթարեան Հայրերուն  
նուիրական Կղզին, ձեր ամէն մէկ քայլը կրնայ հանճարի  
մը անխնայ հանդիպիլ. եւ իմ փոխարէն – կը պաղատի՞մ –  
Ալիշանի շիրմաքարը անգամ մը համբուրեցէք եւ  
սպասե՛լ եղէք որ մարմարիտնին անբծութիւնը՝  
ձեր շրթներուն տակ՝ սրտիս պէս պիտի բոցավառի»  
Դանիէլ Վարուժան

Հայ մշակոյթի հարուստ պատմութիւնը անշփոթ գիտակցութեամբ եւ համոզումով՝ ընդունուած է որ Մխիթարեան Միաբանութեան հիմնադրումով, 1700-ի սեմին բացուեցաւ պայծառ ուղի մը դէպի մշակութային նոր կեանք, որուն պտուղը պիտի ըլլար Հայ ժողովուրդի հոգեկան, մտաւոր եւ ազգային ոգիին արթնացումը, վերանորոգումը եւ զարգացումը:

Փրոֆ. Հրանդ Փաստրմաճեան (Ժընէշի Համալսարանէն) կը գրէ:– «Եթէ Հայ Եկեղեցին հայութեան համար եղաւ պատնէշ մը, որու ետին դարեր շարունակ հայերը կրցան պատսպարուիլ եւ սպասել ազգային զգացումի վերագարթնումին, պէտք է խոստովանիլ, որ այս գարթօնքը կարելի պիտի չըլլար գուցէ, առանց Մխիթարեան Հաստատութեան սքանչելի գործին, ստեղծուած հայորդիի մը (Մխիթարի) կողմէ, որուն նմանները ամէնէն աւելի ուժեղ կերպով իրենց անձնական կնիքը դրոշմեցին Հայ ժողովուրդի ճակատագրին վրայ»:  
(Pasdermajian Prof. H., “Histoire de l’Arménie”, Paris, 1971, Գ. տպ էջ 265):

Եւրոպայէն անցնող ամէն Հայ ուղեւոր, ուխտաւորի մը նուիրական տրամադրութեամբ, այցի կու դայ Վենետիկ ինքնատիպ քաղաքի լճակին մէջ թառած Սբ. Ղազար Կղզին՝ Մխիթարեան Միաբանութեան Մայրավանքը:

Օտարները Հայոց Կղզի կը կոչեն, հոն ամէն ինչ Հայկական է եւ Հայ անունին համար: Աղօթքի հետ՝ աշխատանք, առաքինութեան հետ՝ հայրենասիրութիւն, հաւատքի հետ՝ գաղափարական-սեւեռակէտ եւ միշտ Հայաստան, ամէն ինչ Հայրենիքի համար, Հայ ժողովուրդին համար...: Ասիկա էր պատգամը Մխիթար Սեփաստացի Աբբա՛ճօր. պատգամ ու գործնական ուղեգիծի վրայ՝ վերապրում եւ յարատեւում յղուած Հայ ժողովուրդին, թէ մշակոյթն է մնայունը, թէ առանց հոգեկան արգասիքի չկայ ոչ անհատական, ոչ հաւաքական յատկանիշ, ոչ ազատութիւն, ոչ ալ անկախութիւն, չկայ ազգային նկարագիր ու անհատական արժանապատուութիւն...: Եւ իսկապէս, Մխիթարեան Վարդապետներու կողմէ Հայ ժողովուրդին ընծայուած իմացական ընդհանուր ծառայութիւնը մեծ արժէք կը ներկայացնէ, իրենց բանասիրական, պատմական, գրական, թարգմանական, լեզուական, կրօնական, հրատարակչական եւ կրթական արտակարգ նպաստով Հայ մշակոյթին եւ ընդհանուր հայագիտութեան մտածողութեան մէջ:

Հրատարակչական իրենց գործունեություններն առընթեր, այսօր, Սբ. Ղազարի Մխիթարեան կեդրոնը, ունի իր հայագիտական սեփական պաշտօնաթերթ «Բազմավէպ»ը՝ հիմնուած 1843-ին, որ մեծ թափով կը շարունակէ իր գիտական եւ հայագիտական հեղինակաւոր աշխատանքը՝ յատուկ յարգանք վայելելով հայ թէ օտար բոլոր կաճառներէն եւ գիտնականներէն:

Հոս տեղին է յիշել, որ Մխիթարեան գործունեություններն գլխաւոր ուղղութիւններէն մէկը կը վերաբերի եւրոպայի մշակոյթին հանդէպ իրենց որդեգրած դիրքին: Գրականագէտ Ա. Չօպանեան կ'ըսէ թէ Մխիթարեաններէն առաջ, հայերը երբեք ունեցած չէին եւրոպական Մշակոյթին հետ այնքան խոր եւ ընդարձակ շփում եւ թէ «Մխիթարեանները ամբողջ Արեւմուտքը (եւրոպական մտածողութիւնը եւ արուեստի գեղեցկութիւնները) բացին Հայ Մտքին դիմաց» («Դէմքեր» Փարիզ, 1924, էջ 50):

Ռումանացի հայագէտ՝ Նիքոլա Եորկա, Մխիթարեաններու ծրագրուած ու գիտականօրէն դասաւորուած մտաւորական աշխատանքը եւ ոգին ուսումնասիրելէ եւ ճանչնալէ յետոյ, գրեց.- «Ես խորապէս համոզուած եմ թէ այն ինչ որ ազգ մը հաստատ հիմերու վրայ եւ կենսունակ կը պահէ, անոր արտաքին քաղաքական պայմանները չեն, այլ անոր ազգային ինքնուրոյն մտայնութիւնն է, անոր տոհմային ոգին ...» (Միրունի Յ., «Նիքոլա Եորկայի հետ», Անթիլիաս, Լիբանան, 1972, էջ 403):

Պէտք է նշել յատկապէս թէ Մխիթարեաններու մեծագոյն արժանիքը եղած է յաճախ ուղեյարգարի կամ ուհվիրայի դժուար դերը ստանձնել, կոխելով առապար ուղիներ եւ հարթելով ճամբան յետագայ զարգացումներուն: Այսօր սակայն, շատ քիչ կը լսենք Մխիթարեաններու տակաւին ի գործ դրած վաստակին: Ինչպէս ժամանակը իր պատմութեան էջերուն մէջ գրեց անոնց մասին, ժամանակը դարձեալ իր ատենին պիտի գրէ այսօրուան մասին: Մխիթարեանները կը մնան իրենց լուր եւ համեստ սկզբունքներուն վրայ եւ կը թողուն որ ժամանակը կատարէ իրենց գործունեություններն փաստագրումը:

Մխիթարեան Հայրերուն գործը նախատեսուածէն շատ աւելին է. «գիտակից եւ անձնագոհ» այս մարդիկը կրցած են իրենց դարը լեցնել հարուստ հոգիով ու միտքով եւ իրենց յատուկ եւ ամուսնաւրի դրոշմը պիտի շարունակեն դնել ապագայ ժամանակներուն վրայ եւս:

Տանիա ՕՀԱՆԵԱՆ

## Նոր Գիրքեր

### The Origins of the Armenian Alphabet and Literature Գրիգոր Վրդ. Մագունտեան, Նիւ Եորք, 2006, 176 էջ

Հայաստանեայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդարանը, Ս. Վարդան մատենաշարով լոյս ընծայած է, Գրիգոր եւ Գլարա Զոհրապ տեղեկատուութեան կեդրոնի վարիչ Հոգչ. Տ. Գրիգոր Վրդ. Մագունտեանի «Հայ Այբուբենի եւ գրականութեան ծագումը» երկասիրութիւնը, խմբագրութեամբ՝ Արամ Արքունի:

Հայոց գիրերու գիւտին 1600ամեակին առիթով Զգօն Եպս. Տէր Յակոբեանի հիմնադրամի հրատարակութեամբ յիշեալ արժէքաւոր հատորը գրի առնուած է ի մասնաւորի նկատի ունենալով անգլիախօս հայ հասարակութիւնը:

Գիտական մակարդակով ու բժախնդրութեամբ ուսումնասիրուած նիւթերը նպատակ ունին մեր ուսեալ երիտասարդ սերունդին մատչելի կերպով ներկայացնել, թէ ի՞նչ պարագաներու տակ կատարուեցաւ հայերէն գիրերու եւ գրականութեան ստեղծումը ու դպրութեան զարգացումը:

Հոգեչնորհ հեղինակը իր նիւթին համար հին աղբիւրներէն օգտագործած է Մաշտոցի աշակերտ ու կենսագիր՝ Կորիւն Վարդապետի՝ «Վարք Մաշտոցի» երկը, Ղազար Փարպեցիի «Պատմութիւն Հայոց»ը եւ հիմնական երրորդ աղբիւր հանդիսացող Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն»ը:

Ըստ Մալխասեանի, վերեւ յիշուածներուն մէջ Կորիւնի աշխատութիւնը հիմնական կարեւոր աղբիւրն է, անկէ «պէտք է գաղափար կազմենք գրերի գիւտի եւ առհասարակ թարգմանական գործունէութեան առաջին շրջանի մասին, այնպէս որ, եթէ այս գրուածքը չլինէր՝ մեր գրականութեան պատմութեան սկզբնաւորութեան եւ փառաւոր շրջանի մասին մեր տեղեկութիւնները թերի կը լինէին» (պատ. մատ., էջ 85): Իսկ արդի շրջանի հեղինակներէն Հ. Գրիգոր օգտագործած է լեզուաբան Հ. Աճառեանի «Հայոց գրերը» կոթողական հատորը, Ա. Մարտիրոսեանի «Մաշտոց», Հ. Ներսէս Ակիւնեանի «Ս. Մաշտոց Վարդապետ», Օրմանեանի «Ազգապատում»ը, Յ. Մանանդեանի եւ Նինա Կարսոյեանի աշխատութիւնները:

Հատորը կը պարունակէ նիւթին առնչուող նկարներ եւ Ս. Մաշտոցի ժամանակաշրջանի հայագէտ Հիւսրնի պատրաստած Հայաստանի քարտէսը:

Հատորը բաժնուած է հետեւեալ վեց գլուխներու.

ա. տեղեկութիւն աղբիւրներու:

բ. հայ գիրերու գիւտին պատմութիւնը համաձայն հնագոյն աղբիւրներու:

գ. Ե. դարի սկզբնաւորութեան քաղաքական կացութիւնը:

դ. Հայոց եկեղեցին Դ. դարի կէսէն մինչեւ Ե. դարի կէսը:

ե. գլխաւոր անձնաւորութիւններ:

զ. հայ գրական ժառանգութեան սկզբնաւորութիւնը:

Հատորը կը բովանդակէ նաեւ 350-450 թուականներուն պատահած կա-

ըեւոր դէպքերուն ժամանակագրութիւնը եւ Ս. Սահակ եւ Ս. Մաշտոցի աշակերտներուն հակիրճ կենսագրութիւնները:

Սոյն գիրքին ընթերցումը ի յայտ կը բերէ Հայր սուրբին կատարած հմտալից ու տքնաջան աշխատանքը, որպէս զի հետազօտած նիւթը հետաքրքրական ու մատչելի դարձնէ գրասէր հասարակութեան: Ան առանց յիշելու հայագէտ-պատմաբան հայ թէ օտար հեղինակներու անուններն ու անոնց տեսութիւնները, հարիւրաւոր երկասիրութիւններ քննարկած ու յանգած է տրամաբանական հետեւութիւններու:

Պարտք զգալու ենք “The Origins of the Armenian Alphabet and Literature” հատորէն օրինակներ ապահովել ու նուիրել օտարազգի բարեկամներու, հանրային ու դպրոցներու գրադարաններուն, որպէս զի Մաքսուտեան Վարդապետին մտքին արգասիքը արդիւնաւորուի, մեր Ոսկեդարու անձնաւորութիւններուն հայ դպրութեան ու մշակոյթին բերած նպաստին ծանօթացումով:

Արդարեւ, Հ. Գրիգորին գնահատումով.

“The early fifth-century invention of the Armenian alphabet is a major turning point in the history of the Armenian people. This volume is based on the historical sources for the invention. It views the invention within the context of the accompanying dramatic political events of the division of the Kingdom of Armenia between the rival Persian and Roman empires and the fall of the Arshakuni dynasty: and the history of the Armenian church from the mid-fourth to the mid-fifth centuries: and presents the main personalities associated with the invention and the spread of literacy. It portrays the foundation of the consequent literary tradition that made the Bible accessible in Armenian, preserved many important works of the classical world in Armenian translation, and created much of the basis of Armenian cultural identity for centuries to come”.

Բ. Թ.

Հատորը ստանալու համար դիմել՝

St. Vartan Bookstore  
630 Second Ave.  
New York, NY 10016-4806

**Ոգեդէն Ծոպանուդի. Անթիլիաս, 2006, 252 էջ, հեղինակ՝  
Եղիշէ Ծ. Վրդ. Մանգիկեան**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Տպարանէն, Գալուստ Կիւլ-պէնկեան Հիմնարկութեան հայկական բաժանմունքին մեկենասութեամբ լոյս տեսաւ միաբանութեան երէց անդամներէն՝ Գերպ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանգիկեանի սոյն հատորը: Անոր բովանդակած գրութիւնները նախապէս տպուած են հայ մամուլին մէջ. հեղինակը հատընտիր հատորով մը փափաքած է հրատարակել զանոնք՝ կորուստէ փրկելու մտահոգութեամբ: «Նաեւ, անդրադառնալ անցեալի փորձառութեանց. յիշել դաստիարակիչ ու շինիչ դէպքեր, վերապրել անոնց տուած ոգին ու քաղցրութիւնը», որոնք Հայր Եղիշէին համար «հոգեկան երջանկութիւն է, սրտի բերկրանք, իմացական խրախոյս»:

Նոյն մտատանջութեամբ, ատենին, ան տպագրել տուած է նաեւ իր այլ յօդուածները՝ «Անթառամ շողեր», «Գրասեղանիս թուղթերէն» եւ «Ամօթին հայկականը» գրքոյկներով: Անոր գրիչին կը պատկանին «Յովհաննէս Օձնեցի» (Վարդապետական Աւարտաճառ), «Դուք Ինչ Կը Մտածէք» (զրոյց երիտասարդութեան հետ), «Սահակ Պարթեւ» (համառօտ ակնարկ երիտասարդութեան համար) եւ «Աղօթագիրք» (հայերէն, անգլերէն եւ հնչադրուած) աշխատութիւնները:

«Օրը օրին, ժամանակի եւ պարագաներու պահանջներուն համեմատ ստորագրուած գրութիւններ օրաթերթի հետ եւ նման շուտով իրենց այժմէականութիւնը կը կորսնցնեն ժամանակի վազքին հետ երեւցող զանազան նոր երեւոյթներու առջեւ», կը խորհրդածէ Հայր Սուրբը, «հոգեկան եւ իմացական ապրումներու եւ երկունքի արդիւնք եղող գրութիւնները կորուստէ փրկելու ձգտումը կենսական է ժողովուրդի մը կեանքին մէջ...»:

Յուշերով հարուստ, քառասնամեայ ծառայական կեանքի մը ընթացքին քաղուած, յետագայ փունջ մը ապրումները, լի են յաճախ, կեանքի փորձառութեան դաստիարակչական առաջնորդութեամբ եւ ոգեղինութեամբ...: Սոյն երկը փորձ մըն է կառուցելու իմացական եւ ոգեղէն կամուրջ-ճոպանուղի մը, անցեալի ազնիւ եւ ոգեւին տիպարներու հոգիներուն հասնելու եւ անոնցմով հաղորդուելու...:

Հատորին պարունակած 35 գրուածքները գրի առնուած են Հայր Եղիշէի քառասնամեայ հովուական ու կրթական պաշտօնավարութեան ընթացքին՝ զանազան երկիրներու մէջ: Իր բարձրագոյն ուսումը ստանալէ ետք Քոլումպիա համալսարանի «Միջին Արեւելեան լեզուներ եւ մշակոյթներ» կաճառէն, (ան ծանօթ է արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն, թուրքերէն, պարսկերէն, ադուաներէն եւ յունական լեզուներուն), գրաբար, հայերէն լեզու եւ հայագիտական նիւթեր դասաւանդած է Անթիլիասի Դպրեմանքէն ներս եւ այլ կրթական հաստատութիւններու մէջ: Ապա, հրաւիրուած է վարելու Պարսկաստանի Իսֆահան նահանգի Պետական համալսարանի հայագիտական ամպիոնը:

Գերպ. հեղինակը կաթողիկոսի հրամանաւ իր հովուական, վարչական ու

դաստիարակչական գործունեությունը շարունակած է Կիպրոսի, Գանատայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ. հետեւաբար, հատորին գրութիւններուն մեծ մասը հեղինակին յուշերն են այդ գաղութներուն մէջ ապրած բարեկամական թէ վարչական անհատականութիւններու մասին, որոնց կենցաղային ու նկարագրի վերլուծումներէն բարոյական դասեր քաղուած ու բացայայտուած են:

«Ոգեղէն Ճոպանուղի»ին մէջ ներմուծուած կը գտնենք նաեւ կրօնական ուսումնասիրութիւններ, ուր հեղինակը ներհուն կերպով բացատրած է հետեւեալ խնդրելի հարցերը. «Քրիստոս եւ իր... եղբայրները», «Տասնեութ տարիները» (Ո՞ւր էր Քրիստոս), «Մարդը բարի», «Ներելու արուեստը», «Ազգային երեւոյթներ Նոր Կտակարանի մէջ»: Ան հմտօրէն քննարկած է «Ամանորի «նոր»ութիւնը», «Բարբառներու վերակենդանացման հրամայականը», «Իրօջակ», «Հայկական Պարը», եւ այլ նիւթեր:

Հայերէն լեզուին նրբութիւնները իւրացուցած՝ Հայր Եղիշէն իւրայատուկ հիւմըրով ու բանաստեղծական թռիչքով մեզ կը հրամցնէ համեմուած ու դաստիարակիչ պատումներ, որոնք վէպի մը հետաքրքրութեամբ կը կարգացուին:

Ներկայիս, ան վերադարձած ըլլալով Մայրավանք, ստանձնած է իր սրտին մօտիկ ու նախընտրած պաշտօնը՝ դասասխօսելով Պիքֆայայի Զարեհեան Դպրեվանքէն ներս. դաստիարակչութեան իր վերադարձը «պարզ վերադարձ մը չէ իրեն համար, այլ հոգեկան կազդոյր, իմացական վերակենսաւորում եւ ամէն բանէ վեր՝ ոգեղինութեան երջանկաբեր ժայթք»:

Մանճիկեան Հայր Սուրբին առինքնող յուշագրութիւնը կարելի է ձեռք ձգել Անթիլիասի մայրավանքի գրատունէն:

Բ. Թ.

## «Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ», Անթիլիաս, 2006, 656 էջ Հեղինակ՝ Փառէն Եպս. Մելքոնեան

Սոյն գեղատիպ լաթակազմ հատորը գրական արգասիքն է Արմաշական Փառէն Եպս. Մելքոնեանի (1873–1957), գոր Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններէն՝ Գրիգոր Մ. Վրդ. Զիֆթճեան, մամուլի մէջ ցրուած ու «Հասկ» ամսագրի մէջ տպուած գրութիւնները մէկտեղելով, բարեխղճօրէն խմբագրած ու հրատարակած է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան մեկենասութեամբ:

Հոգելոյս սրբազան հեղինակը եղած է դասընկերը եւ օժակիցը Երանաշնորհ Թորգոմ Պատրիարք Գուշակեանի, որոնք իրենց բարձր ուսումը ստացած են Արմաշի Դպրեվանքին մէջ, աշակերտելով Օրմանեան եւ Դուրեան սրբազաններուն:

Մեծարժէք աշխատասիրութիւններու ժողովածոյ մըն է «Յօդուածներ եւ Ուսումնասիրութիւններ» հատորը: Անոր բովանդակութիւնը աչքի անցնելով, իրազեկ կը դառնանք որ անոնք սերտ աղերս ունին «Հայ եկեղեցւոյ աստուածաբանութեան, ծէսին, արարողակարգին, պատարագին, ըմբռնումներուն, աւանդութիւններուն եւ օրէնքներուն մասին»: Այսպէս, Քարոզախօսականի նիւթերն են՝

- Քրիստոնեան ազատ է «օրէնք»ին գործերէն եւ

- Քրիստոս լոյս աշխարհի (էջ 21-39):

Կանոնադիտական որակումի տակ պրպտած է

- Կաթողիկոսական ընտրութիւնը անցեալին մէջ եւ այսօր (էջ 40-86):

Աստուածաբանական գրուածքով յուզած է

- Քրիստոնեան գերեզմանէն անդին հարցը (էջ 87-136):

Ծիսական-եկեղեցագիտական բաժինով վերլուծած է

- «Հասկ»ի պատասխանները եւ

- Բաղդատական համառօտ ուսումնասիրութիւն հայկական պատարագամատոյցի մասին (էջ 137-282):

Պատմա-ուսումնասիրական վերտառութեամբ բացատրած է

- Հայց. Առաքելական եկեղեցին

- Արմաշու Դպրեվանքը (1889-1915)

- Նահատակութիւն Ս. Վարդանանց եւ Ս. Ղեւոնդեանց

- Բացատրութիւն եւ վերլուծում քանի մը շարականներու

- Պատասխան Քաւարանի ջատագովին...

- Բարեխօսութիւն Սրբոց

- «Աւետիք»եան խնդիրներ (էջ 283-479):

Հատորը կը բովանդակէ նաեւ 5 Գրախօսական, 6 Մահագրութիւն եւ 2 Քրոնիկային նիւթեր:

Խմբագիրը Հայր Սուրբը 7-20 էջերուն մէջ բծախնդիր աշխատանքով տուած է Փառէն Սրբազանին կենսագրականը, ու անոր կեանքին հետ առնչուող նկարներ:

Փառէն եպիսկոպոս ուսումնական ու վարչական պաշտօններու բերումով աստանդական կեանք մը վարած է Կ. Պոլսոյ պատրիարքութեան իշխանութեան թեմերէն ներս: Կիլիկիոյ հայութեան պարպումէն յետոյ, 1930ին, Բաբգէն կաթողիկոսի հրահրով անդամ կը դառնայ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութեան:

Մեղքոնեան Սրբազանին լեզուն մաքուր եւ սահուն է, ոճը՝ կուռ: Հետագօտած նիւթերը հմտութեամբ նկարագրած ու շարադրած է: Ան եղած է Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ջատագով ու անձնուէր հոգեւորականներէն, որոնք նախանձախնդիր կերպով, ուղիղ դաւանանքով պաշտպանած են Հայ ազգային եկեղեցւոյ դաւանութիւնը, վարդապետութիւնը, իրաւունքները եւ վարկն ու պատիւը:

Գերապատիւ խմբագիրը իրաւացիօրէն դիտել կուտայ. «Վստահ ենք որ

Ս. Գրային, եկեղեցագիտական, կրօնական ու պատմական բնոյթի յօդուածները օգտակար պիտի հանդիսանան հայ հաւատացեալին, հոգեւորական թէ աշխարհական, հարստացնելով անոնց իմացական պաշարը: Նաեւ, Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան խնդրով գումարուելիք որեւէ ժողովէ առաջ, նպատակայարմար է ընթերցել սոյն հատորի եկեղեցագիտական ու կանոնագիտական բոլոր յօդուածները, առաջնորդուելու համար այստեղ արտայայտուած աւանդական, շինիչ ու ուղենշային մտածումներէն» (էջ 20):

Ջերմօրէն յանձնարարելի է որ հայ եկեղեցիով հետաքրքրուած անհատներ եւ ուսումնասէրներ, կաթողիկոսարանի գրատունէն օրինակ մը ապահովեն օգտուելու համար անոր մատուցած հոյակապ երկասիրութիւններէն:

Բ. Թ.

## «Մանապարհ», Թորոնթօ, 2007, 874 էջ, Գլխաւոր Հեղինակ՝ Գրիգոր Հոթօնեան

Ահաւասիկ մեծածաւալ հատոր մը ուր բովանդակուած կը գտնենք Գրիգոր Հոթօնեանի 60ամեայ գրական վաստակը:

«Ճանապարհ» խորագիրով գիրքի լոյս ընծայմամբ, վաստակաւոր հեղինակը բերքահաւաքը կատարած է տարիներու ընթացքին հայ մամուլին մէջ տպագրած «ուսումնասիրութիւնները, յօդուածները, թղթակցութիւնները, հարցազրոյցները, երգերն ու բանաստեղծութիւնները» մէկտեղելով:

Սոյն մեծածախս հատորին մեկենասութիւնը ստանձնած է հեղինակին Անի դուստրը, մեծապէս գնահատելով եւ արժեւորելով իր հօր գրական, հասարակական, դաստիարակչական, լրագրական ու մշակութային գործունէութիւնը:

Արմէն Տօնոյեանի յառաջաբանէն ետք (էջ 9-11), հատորը կ'ընդգրկէ հետեւեալ բաժանումները.

ա. Յօդուածներ (էջ 15-142).

բ. Ուսումնասիրութիւններ (էջ 145-202).

գ. Պատմուածքներ (էջ 205-284).

դ. Թղթակցութիւններ (էջ 287-568).

ե. Հարցազրոյցներ (էջ 571-670).

զ. Առիթներով խօսուածներ (էջ 673-700).

է. Մահագրութիւններ (էջ 703-758).

ը. Երգեր (էջ 761-780).

թ. Բանաստեղծութիւններ (էջ 783-802).

ժ. Գրախօսականներ եւ վկայութիւններ «նուիրում» հատորին հրատարակութեան առթիւ (էջ 805-831).

ի. Գրախօսականներ եւ վկայութիւններ «ի ինդիր բարոյական ճշմարտութեան» հատորին հրատարակութեան առթիւ (էջ 835-865):

Հատորը ճոխացած է հեղինակին եւ այլ անձնաւորութիւններու յիշատակելի նկարներով:

«Ճանապարհ» գիրքին հրատարակութեան առթիւ Գրիգոր Հոթոյեան հետեւեալը կ'ըսէ.

«Սոյն հատորը գրական-գեղարուեստական բովանդակութիւն չունի: Հոն ամփոփուած գրութիւնները, որոնցմէ շատերը լոյս տեսած են 50-60 տարիներ առաջ, մամուլի էջերէն դուրս հանելով պատրաստուեցաւ այս հատորը, որ մեծ դիւրութիւն կ'ընծայէ անցեալին կատարուած ձեռնարկներուն նպատակը, բովանդակութիւնը եւ թուականները յիշեցնելու, որոնց ընթերցումը այդ շրջաններուն գործող եւ ապրող հայ ազգայիններուն կը վերյիշեցնէ այդ օրերը: Իսկ նոր սերունդները կ'ունենան անցեալին կատարուած ձեռնարկներէն որոշ գաղափարներ, ընդօրինակելով անոնց հայրենասիրական, ազգային եւ եկեղեցասիրական ոգին»:

Գրիգոր Հոթոյեանի յիշեալ գնահատելի աշխատասիրութիւնը թանկագին աղբիւր մը պիտի ըլլայ ապագայի այն ուսումնասէր անհատներուն համար, որոնք պիտի հետազօտեն սփիւռքահայ կեանքն ու պատմութիւնը:

«Ճանապարհ»ը հետաքրքրութեամբ ընթեռնելի հատոր մըն է իր ճոխ եւ այլեւայլ նիւթերու բովանդակութեամբ:

Կը շնորհաւորենք հեղինակը իր այս օգտաշատ աշխատութեան համար ու կը թելադրենք որ իւրաքանչիւր հայ ընտանիք իր յարկէն ներս ունենայ օրինակ մը «Ճանապարհ» գիրքէն:

Բ. Թ.

Ստանալու համար դիմել՝  
Krikor Hotoyan  
34 Leith Hill Rd. Apt. 511  
North York, Ont., Canada  
M2J 1Z4

## Ցաւակցագիր

Մոնթրէալ, 18 Ապրիլ, 2007

Սգակիր այրի Տիկ. Ալիսա Խաչերեան եւ գաւակունք.

Մամուլէն կակիծով իմացանք մահուան գոյժը մեր յարգելի Դոկտ. Փրոֆ. Լեւոն Գ. Խաչերեանի:

Անոր մահուամբ հայ ազգը եւ մշակոյթը կորսնցուց իր արժանաւոր, վաստակաշատ եւ ուսումնասէր գիտնականներէն մին, որ իր մեծարժէք լեզուաբանական ու պատմա-բանասիրական ուսումնասիրութիւններով ու հրատարակութիւններով, մեծապէս նպաստեց հայագիտութեան նոխացման, բարգաւանման եւ արժեւորումին:

Վստահ ենք որ անոր հոգին գնաց միանալու իր աշնան պաշտած եւ հետազօտած հայ մեծահմուտ եռամեծ վարդապետներու հոյլին:

Մեր խորին ցաւակցութիւնը յայտնելով, կ'աղօթենք որ Ս. հոգին մխիթարէ Ձեզ:

Օրհնեալ ըլլայ հանգուցեալ Լեւոնին քաղցր յիշատակը:

Մնամ յարգանքով՝

Բարգէն Թօփինեան  
Խմբագիր՝ Գանատայի Հայոց Առաջնորդութեան  
«Լոյս» երկամսաթերթի

# Միջ-Յարանուանական ոգեկոչում

Հայոց Յեղասպանութեան 92ամեակի նուիրուած միջ-յարանուանական ոգեկոչման ձեռնարկը տեղի ունեցաւ Մոնթրէալի մէջ, Ապրիլ 23ի երեկոյեան, մասնակցութեամբ Հայաստանեայց Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական համայնքներուն, ինչպէս նաեւ ներկայութեամբը՝ Նորին Վսեմութիւն Պրն. Արման Յակոբեանի, Հաւատարմատար՝ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան Օթթաուայի մէջ:

Գերաշնորհ Տ. Խաժակ Ա. Արք. Յակոբեան, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի, Գերաշնորհ Տ. Բագրատ Եպսկ. Գալստանեան, Առաջնորդ Գանատահայոց, Տ. Գէորգ Մ. Վրդ. Զապարեան, Առաջնորդական Փոխանորդ Հայ Կաթողիկէ համայնքի եւ Վերապատուելի Մհեր Խաչիկեան, Հոգեւոր Հովիւ Հայ Աւետարանական Մայր Եկեղեցւոյ, փոխանցեցին իրենց պատգամները: Կրօնական այս ձեռնարկի ընթացքին, բոլորն ալ կարեւորութեամբ անդրադարձան մեր եկեղեցիներուն, դպրոցներուն, հաստատութիւններուն եւ կազմակերպութիւններուն շարունակական գործունէութեան՝ ի սպաս հայ ժողովուրդին եւ մեր արդար դատին:

Զեռնարկի գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Կոմիտաս երգչախումբը, Հայ Կաթողիկէ Նարեկ Տիրամայր եկեղեցւոյ Ալեմշահ եւ Կռունկ երիտասարդական երգչախումբերը, Ս. Յակոբ եւ Ս. Գէորգ եկեղեցիներու միացեալ դպրաց դասերը, Ս. Յակոբ Ազգային Վարժարանէն Մարիամիկ Թովմասեանը եւ միջնակարգի աշակերտութիւնը, ինչպէս նաեւ Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Նոր Ծաղիկ պատանեկան երգչախումբը:

Եկեղեցական այս հանդիսութենէ ետք, հոգեւոր պետերը հոգեհանգստեան պաշտօն կատարեցին Ազգային Առաջնորդարանի խաչքարին դիմաց:

Միջ-յարանուանական ձեռնարկէն ետք, Խաժակ Արք. Յակոբեան մասնակցեցաւ ՀՅԴ ԳԵՄի քայլարշաւին, ընկերանալով անոնց մինչեւ Հայկական Յեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

«ՀՈՐԻԶՈՆ»